



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1235

1999



43797-4.2

48

M. K. P. 1/2

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼՍՈՅ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՀԱՅՈՑ

ՆԵՒԵԳԸ Հ

ՀԸՍՈՒՆ ԳԵՐԱՊԵՅԾՆՈՒՆ ՀԵՏ

ՈՒՆԵՑԱԾ ԴԱՏԻՆ ՎՐԱՅՕՔ



№ 255



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՄ

28179-62

ԻՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԻՆՏԻՍԵԱՆ

- 1853 -

*1
2
3
4
5*

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Նախագահական Ըտե՛նագպիր Պորճօնեան Տէր Յովսէփ Վարդապետին 1853 յունիս 20 քանի մը մտերմական խորհրդածուլթիւններ անուամբ հրատարակած տետրակին քառաներորդ երեսը աս հատուածը կարդալով՝ « Հեղինակին ան մեքսայանո-լի-ն-ները որ կ'ընէ իբր ինչ Հասուն Վերայայծառը, և ի-ր Տպերի՛մերը կը ջանան Սիիլեարեանց վանքը կործանելը, կրօնա-որները ջնջելը և այլ ասոնց նման իշխամական մեքսայանո-լի-ն-ները որչա՛փ անհիմն ըլլալը արդէն մեքսայանո-լի-ն-ները ըլլալուն համար, և ոչ պապականի արժանի կը փեսնէնչ զանոնք, վասն զի աղէի գիպէնչ արոնչ Հասուն Վերայայծառին, և իրեն Տպերի՛մերուն համար և շիփա-որո-լեան զե՛մ գանգապներ ըլլալը » • զարմացանք հեղինակին համարձակութեանը, որ ինչ պէս ասանկ մէկ յայտնի ճշմարտութիւնը ուրա նալով կ'անցնի կ'երթայ՝ որ բո՛ւն ուշադրութիւն դնելու և ցուցունելու բանն էր : Մենք աս մասը ՚ի լոյս հանելու համար, և Հասուն Վերայայծառին վանականաց որչա՛փ դե՛մ ըլլալը ծանուցանելու համար, աս համառօտ գրուածը շինելու ձեռք զարկինք :

ՀՔ. 1939

1235-60

ՃՇՄԱՐ ՏՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ ՀՌՈՎՄԵԱԿԱՆ ՀԱՅՈՑ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ՀԱՍՈՒՆ ԳԵՐԱՊԱՅԾՆՈՒՄՆ ԷՆՏ

ՈՒՆԵՑԱԾ ԴԱՏԻՆ ՎՐԱՅՕՔ

« Ճշմարտութիւն մեծ և զօրաւոր է քան զամենեւեան, ամենայն երկիր սաղաւինի 'ի Ճշմարտութիւն և երկինք օրհնեն զՃշմարտութիւն, և ամենայն գործք շարժին և դողան առաջի նորա, և ոչ է 'ի Ճշմարտութեան անիրաւութիւն և ոչ մի: »
Ս. ԵՂ. Դ. ԾԾ.

Ա. ՄԱՐԴԱՅԻՆ ԲՆՈՒԹԻՆԻՐ ՄԵՂԵՐՈՎ ՈՒՆԵԿԱԾ ԲՈՂՈՐ զԵՐԲՆԱԿԱՆ ՃԻՐՔԵՐԸ ԿՈՐԱՆԵՅՆԵԼԷՆ ԵՄԵ, ԲՆԱԿԱՆ ՃԻՐՔԵՐՈՒ ԱԷՂՆ ԱՂ ԱԷՆԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՄՐ ՈՒՆԵԿԱՑ: Միտքին ազիտութիւնը՝ կամքին չարութիւնը՝ բարիէն ետ կենալ ու չարին հետեւիլ ասոնց ամենէնը յանցուցեալ բնութեան պտուղները եւ զան: Մարմինը՝ հոգւայն հպատակութենէ դուրս ելած, բոլոր զգայարանքները գլուխ վերցուցած խեղճ մարդը ողորմելի կացութեան մէջ ինկած կեցած է: Յակոբբոս առաքեալին մինակ լեզուին համար գրածը միտքդ բեր, բոլոր գազանները՝ թրուչունները ու գետնի ու ծովի կենդանիները մարդուս կը հնազանդին, մինակ մարդուն լեզուն է կ'ըսէ՝ որ հնազանդութեան տակ մանալ չ'ուզեր: Ասկէց իմացիր՝ որ մարդուս ունեցած մեկալ կարողութիւններն ալ հոգիին դէմ պատերազմելու ըլլան, տկար մարդուն վիճակը արդեօք ս'ըր կը հասնի:

Այ վերջին աստիճան ողորմելի վիճակին մէջ, մարդը՝ թէ որ Ճշմարտութեան լուսով չ'առաջնորդի, ու իր դատումը ու գործողութիւնները Ճշմարտութեան սկզբանց հետ չ'միացնէ, կը խաբի անտարակոյս ու մոլորութեան մէջ կ'իջնայ:

Ղշմարտութեան սկզբունքները՝ յաւիտենական ու բնական ու ասոնցմէ առաջ եկած դրական օրէնքներն են : Ասոնցմով մարդը կը զատէ բարին՝ չարէն, իրաւը՝ սուտէն, արդարը՝ անարդարէն, իրաւունքը՝ անիրաւութենէն, և թէ իր ըրածին, և թէ ուրիշներու բոլոր գործողութեանց վրայ շիտակ դատաստանը կը կտրէ . անոնց բարի կամ չար, օրինաւոր կամ ապօրինաւոր ըլլալուն համար : Արովհետեւ մարդու մը բոլոր գործքերը՝ խորհուրդները՝ եթէ ճշմարտութեան սկզբանց համեմատ գան՝ բարի, իսկ եթէ անհամեմատ՝ չար կ'ըլլան :

Ղշմարտութիւնը՝ ամմէն բանին չափը ու կշիռն է, և ամմէն բան ճշմարտութեան վրայ հիմնուած ու հաստատուած է . նոյն իսկ աստուածային հաւատքն ալ, որովհետեւ Աստուած է բուն ճշմարտութիւնը. « Եւ եմ ճանապարհ և ճշմարտութիւն » (Յովհ. 14 . 6 .) :

Սէկ Աստուծոյ ճշմարտութիւնը ինչչափ որ անժխտելի է, անչափ ալ անոր համեմատութիւնով բարի ու աստուածահաճոյ գործք մը ճշմարտութեան սահմանէն չ'պիտի խոտորի, ապա թէ ոչ՝ իր բարութիւնը կը կորսնցնէ ու չարին կը դառնայ :

Սէկ մասնաւոր մարդու մը գործողութիւնները՝ որպէս զի բարի ըլլան, պէտք է՝ որ ճշմարտութեան կշիռքին համեմատին . Սէկ հրապարակական պաշտօնեայ անձ մը՝ իր պաշտօնին մատակարարութիւնը աղէկ կատարելու համար, պէտք է՝ որ ճշմարտութեան սահմանէն դուրս չելլայ : Տուած հրամանները՝ դատաստան կտրելը՝ յանդիմանելը՝ խրատելը, ու բոլոր ներքին ու արտաքին գործողութիւնները՝ աս ճշմարտութեան կշիռքին համեմատ պէտք է որ գան : Ստութիւն՝ կեղծաւորութիւն՝ ակնածուրթիւն՝ աշառութիւն, կամ ինչ և իցէ մարդկային նկատմունք՝ աս ճշմարտութեան դէմադէմ հակառակ կուգան, ու ասոնցմով առաջ եկած գործքերը ու եղած դատաստանները՝ ոչ եթէ ճշմարտութեան՝ այլ նենգութեան կշռով կշռուած է, զոր Քրիստոս աւետարանին մէջ հրէայներուն « Դուք ըստ մարմնոյ դատիք » ըսելով՝ անոնց աս ծուռ կշիռքը իմացունել ուղեց : Եւ ետքը վրայ բերաւ թէ՛ ինքը անանկ ծուռ չէր դատեր . « Եւ ոչ դատիմ ըստ մարմնոյ և ոչ զոր » : Այլ բուն ճշմարտութիւնը ինքը ըլլալով՝ դատաստանն ալ ճշմարիտ է . « Եւ դատաստանն իմ ճշմարիտ է » :

Սէնք հիմայ նենգութեան ըստ մարմնոյ ըսուած դատաստաւ

նը՝ մէկ կողմը ձգենք, ու բուն ճշմարտութեան կշիռը ձեռվը նիս առած, ատեն մը Վիտգինէս փիլիսոփային՝ ցորեկուան լուս ատեն՝ լապտերը ձեռքը ճշմարիտ մարդ փնտռելուն պէս, մենք ալ հիմակուան քրիստոնէութեան հաւատոյ պայծառ ժամանակը՝ ճշմարտութենէ առաջ եկած ճշմարիտ ու իրաւացի ու արդար գործք մը ելլանք փնտռելու :

Բ. | սեր ես կոստանդնուպօլսոյ Հայոց ուղղափառաց Նախագահ Հատուն Վերապայծառին և ժողովրդեանը մէջ գրու նուած խռովութիւնը, որուն արեւելք և արեւմուտք բոլոր ՚ի զննին կեցեր կը նային :

Այ խռովութիւնը՝ սկիզբն ունեցաւ անոր Նախագահ նըստած օրէն, որ Ազգին հաւանութիւնը չ'փնտռելէն ետե, ա նոնց իրաւունքն ալ Նախագահի ընտրութեան եղծանել ուղեց, ու ճամբով մը Հռովմայի աթոռէն Նախագահ ըլլալու հաստատութիւնը առաւ :

Այ կերպ սկսուած մը՝ բարի վերջ մը չէր ունենար, և իրօք ալ ինչպէս որ առջի բերան Ազգին ընտրութեան իրաւունքը ոտքի տակ առեր էր, անկէց ետե ալ Ազգին ուրիշ իրաւունքները յափշտակեց, բանաւոր ստիպութիւնները դադրեցուց, ու անոնց հակառակ՝ նոր կանոններ անսովոր օրէնքներ սահմանեց, որով բովանդակ Ազգին խռովութեանը պատճառ եղաւ : Եթէ քննելու ըլլանք թէ՛ ինչէ՛ն Հատուն Վերապայծառը կը շարժի աս բաները ՚ի գործ դնելու, և թէ ի՛նչ է ասոնց բուն պատճառը՝ խեղացի բժիշկի մը օրինակին պէտք է որ հետեւինք : Բժիշկ մը հիւանդի կը կանչուի, կը լսէ անոր մարմնոյն տկարութիւնը, գլխոյն պոսոյտքը, ծունկվլններուն կրարըվիլը և այլն. բայց ասոնք առանձին առանձին հիւանդութիւնն չը բռներ մնար, հապա առաջ կ'անցնի քննելու անոնց պատճառը թէ ո՞րիկէց առաջ կուգան : Սէնք ալ թէ փնտռելու ըլլանք Հատուն Վերապայծառին բարոյական հիւանդութեան բուն պատճառը՝ կը գտնանք Վանականաց դէմ իրեն ունեցած ատելութիւնը : Անոր բոլոր դիտմունքը ու գործքերուն նպատակը հոս կուգան կը ըմբնան՝ որ Վանքցիները օտարական համարուին, և առաքելութիւնը՝ մինակ աշխարհական քահանային սեպհականուի : Հայր անունը՝ բոլոր քաղաքներէ վերցընէ. ու աս մակդիրով կարգաւոր չ'գտնուի՝ բայց մինակ Վանքերու մէջ : Հոն կենան մնան նուաճին. ու ժամանակէ ետե մարին լըմբնան, և ինքը

իրբ գլուխ և տէր հոգևոր ազգային ստացուածոց, անոնց ինչ-
քերն ալ ժառանգէ ու հարստանայ : Աս փաստակար նպատակը՝
շատոնցմընէ իւր սրտին մէջ յղացեր էր, ու վեց տարի առաջ՝
իր ներքին խորհրդականներու առջին վիժեր էր յանդգնու-
թեամբ Վանաչարըն ի վնէ ինձիր աղաճը փոխձեհիժ խօսքով, ահա այս
է Հասուն Գերապայծառին բոլոր գործքերուն՝ կանոններուն՝
խորհուրդներուն նպատակը :

Գ. Իայց Հասուն Գերապայծառին գործքերուն նպատակը՝
եթէ Վանականները վերցընելու ու վճացունելու միտքին կու-
գան կ'աւարտին, հապա անոր աս միտքին նպատակը ինչ է,
կամ թէ ըսենք վերջին վախճանը ինչ է :

Աս բանը ինչչափ ալ յայտնի է նէ, թերեւս չգիտցող ալ ըւ-
լայ : Հասուն Գերապայծառին Վանականները վերցունելու
միտքին նպատակը ազգերնիս բոլորովն ճնշել ու իր օփը առ-
նել ուղեղն է . Ազգը իր օփը առնել ուղեղուն նպատակն ալ՝
ազգին վրայ կատարեալ տիրել ուղեղն է . ու աս կը համրի անոր
վերջին վախճանը : Աս ստորակարգեալ առջի երկու նպատակնե-
րը (որոնք միջոց մը կարգեր է վերջին դիտած վախճանին հաս-
նելու), մեկզմէկու հետ կապակցութիւն մը ունենալու հա-
մար, ինչչափ որ Հասուն Գերապայծառին միտքը՝ մեկզմէկու
խառնել չէ, և մեկ ժամանակի մէջ թէ Վանականներու հետ և
թէ Ազգին հետ աւրուիլ չէ նէ, Ազգին բաները մեկ մեկու հետ
կապակցութիւն ունենալուն համար, ահամայ թէ Վանականնե-
րու և թէ ազգին հակառակ կ'երեւնայ : Այլ ինչչափ որ Հասուն
Գերապայծառը աս օրուան օրս կ'ստիպի երկու առանձին հա-
կառակորդ ունենալ, ու անոնց դէմ գնել, 'ի վերայ այսր ամե-
նայնի՝ անոր բուն միտքը առ այժմ Վանականներու դատը առաջ
տանել է . անոնք յազթահարելն ետեւ, ետքը Ազգին հետ
մարտնչիլ : Հիմակուան անոր բոլոր գործքերը սկզբնաբար Վա-
նականաց դէմ գնելու համար եղած է : Անոր գործքերուն կա-
նոններուն խորհուրդներուն սկիզբը ու վախճանը աս խմբով
շաղուած է . բոլոր գործողութիւններուն մէջ՝ աս թթուած
հտը կ'առնես : Կուզես մեկ քանին քեզի խմացունեմ, ու մնացած-
ները դուն քեզմէն հետեւցուր :

Գ. Գերապայծառ Հասունեանը՝ աս կրօնաւեր խորհուրդը
գլուխ տանելու համար, իր քահանայութեան ժամանակէն ըս-
կրսաւ ճամբաներ մտածել Ազգին առջեւ անցնելու : Ատիաւ

դահ Սարուշ Գերապայծառին օգնական ըլլալու. անունով՝ Եպիսկոպոսութիւն առաւ : Անկէց Աղբին Նախագահութեան ձեռք զարկաւ, և քիչ ժամանակէ ետեւ Աղբապետութիւնն ալ վրան անցուց, որպէս զի խորհրդոցը յաջողութեան մարմնաւոր զորավիգ ալ ունենայ :

Աս իրեն միահեծան տէրութեան ժամանակ՝ Աղբին միութեան կապերը քակեց : Պատրիարքարանի դատ կըտորդ ազգասէր իշխանները ցրուեց : Յիսուս փրկիչ մայր եկեղեցւոյն աշխատաւոր եկեղեցականները հանեց : Սկեբերան եկեղեցւոյն երախտապարտ իշխանները պաշտօնէն ձգել տուաւ : Աղբատաց սընտուկին աշխատաւոր Աղաները վար առաւ : Ասոնց ամմենը ինչ բանի համար բրաւ դիտե՞ս, որպէս զի իր դիտմանը հակառակող ազգային իշխանութիւն մը չունենայ առջեւ :

Ե. Համազգեսց ըսուած ընկերութիւնը հերետիկոսութեան վտանգ ունի ըսելով բճացունել ուզեց նէ, բուն միտքը աս չէր. հապա ընկերութեան անձինքները տարուէ տարի բազմանալով, իր դիտմանը հակառակող զօրութիւն մը չ'գտնուի, որ Վանականներէ վրէժը առնէ, ու զանոնք բոլորովին փճացունէ : Ու դեռ աս պատճառի համար չէ՞ր արդեօք՝ անոր հակառակիլը բարձրագոյն դռնէն հրամայուած տասն ու երկուքներու ընտրութեանը :

Զ. Առ ժամանակեայ նոր կերպ ժողովրդապետութիւնը՝ որ դրսէն բարի ու ժողովուրդին օգտին համար գրուած կ'ըկարծուի նէ, ներքինը Վանականներու ձեռքը ժողովրդեան վրայէն ետ քաշելու համար հնարած չէ՞ : Այլ թէ և առջի բերան շատ տեղեր Վանական վարդապետներ կարգեց, այլ աս ալ՝ անսովոր բանին նոր սկսած ժամանակ դժուարութեանը համար էր, չէ՞ նէ՝ ինչո՞ւ հիմակ ալ Վանական չ'գործածեր :

Ե. Կտակն ալ՝ որ ամմէն տեղ աշխարհական իշխանութեան յանձնուած է, իր իշխանութեան տակը առնելը՝ արդեօք աս միտքի համար չէ՞, որ Վանքերու ու Վանականներու բարերարութիւն մը չ'ըլլայ :

Կտակի մը անվաւեր ըլլալուն մէկ պակասութիւնն ալ՝ Վանքերու ու Վանականներու բան նշանակելը չէ՞ :

Ը. Նախագահ ընտրելուն իրաւունքը ազգէն յափշտակելուն վախճանն ալ աս չէր. թեմեր սահմանելը՝ եպիսկոպոսներ օծելը՝ աս միտքին չէ՞ն նայիր, որ ընտրութեան իրաւունքը Աղբէն

Վերցուի ու Լյուիսիոպոսներու ժողովքին շնորհուի, որ անոնք ալ իրենց մէջէն մէկը ընտրեն, ու երբէք Վանականի մը Լյուիսիոպոս ըլլալու՝ Աթապազա ըլլալու յոյս մը չը գտնուի և ոչ մէկ ժամանակ:

Թ. Լսիկէ մէկ քանի տարի առաջ Տարածման սուրբ ժողովքէն սուտ ու մուտ խօսքերով՝ Վանքցի քահանայներու համար եղած պատուէրը՝ արդեօք ան ալ Վանականաց տունը աւերելու համար չէր. Լուսբերութեան մէջ գտնուած Վանական վարդապետները՝ ժամանակէ մը ետեւ Վանքերնին դառնան կրթութիւն ընեն, ու անոնց տեղը նոր գալիքները Լյուիսիոպոսին հըրամանովը ըլլայ ըսուած պատուէրը խելքըք ինչ կը կարէ՝ արդեօք Վանականներու օգտին համար է. կամ յարգոյ սուրբ ժողովքին կարտինալներէն Հոգևով սրբով արուած պատուէր մը: Չէ՛նք ուրանար՝ որ պատուէրքին ձայնը յարգոյ կարտինալաց ձայնն է, բայց ձեռքը՝ ձեռք Լսաւայ:

Ժ. Չարամատեան պարսաւազրքին հեղինակ ըլլալով, Լքբայի Վանականները հերեօտիկոս՝ հերձուածող ու յանսենեան ըսելը, արդեօք աս ալ նոյն ատելութեան աղբիւրէն չի բղխիր, որ անոնց յարգը ժողովրդեան առջեւէն բոլորովին վերցնէ. Լքբացւոց՝ հերեօտիկոս ըսելով, միթէ մէկալ Վանականաց ուղղափառ են ըսաւ: Իր սրտակից քահանայներուն բռնած ճամբան ինչ կը ցուցունէ. Վիէնայի ու Լնտոնեան վարդապետներն ու խոստովանաորդիքները՝ խոստովանանք ըրած ժամանակին, եղած խոստովանանքնին կրկնելը ինչ կ'իմացունէ. Ուղղափառ բռնած ըլլային՝ խոստովանանքնին կրկնելը ինչ պէտք էր: Իսլամը տանքնուս ձեռք չի տար, անոնք կասկածաւոր են, հերեօտիկոսի կողմ են, ու ասոր նման շատ խօսքեր ինչչափ կ'ուզես՝ շատ անգամ լսած չես: Լս խօսքերը՝ արդեօք Վանքցիները ուղղափառ են ըսել է:

ԺԱ. Վիէնայի միաբաններէն՝ Պիւլպիւլճեան Պետրոս Վարդապետին եղածը ինչ կը ցուցունէ: Լս քահանան հիւանդութեան պատճառով՝ ի կոստանդնուպօլիս գալու ժամանակ արդեօք առանց յանցանաց պատարագ զուրցելէ արգիլելը տեղ ունէր: Երդեօք աս անիրաւ գործքը՝ Վանքցիներու դէմ ունեցած ատելութենէ առաջ չեկաւ. և մինչեւ հիմա նոյն քահանային զգեստին փոխելուն հրամանը զլացուիլը՝ նոյն ատելութեան պտուղը չէ: Ինքը Հոգեւոր մենծ ըլլալով՝ արտաքին բա

ներու խառնուիլը ինչ կը ցուցնէ : Եթէ տեղւոյն հոգեւոր Առաջնորդին հաւանութիւնը պէտք ըլլար, որ քահանան արեւելքէն արեւմտեան քաղաքները մտած ժամանակ՝ տեղւոյն եպիսկոպոսէն գլխանոց դնելու համար, կամ զգետոր փոխելուն հըրաման կ'ուզէ : Արդեօք ինքը Հասկմ գացած ժամանակ՝ Վիքարեաթոյէն հրաման առաջ գլխանոց (չափրա) դնելու, թէ չէ՞ : Բրիտոսի ըսածը արդեօք իր վրայ չըճմարտեր : « Կապեն բեռինս ծանունս և դժուարակիրս, և զնեն ՚ի վերայ ուսոց մարդկան, և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնոսա » : (Սաբ. իգ. 4) :

ԺԲ. Կուզեն մէկ ուրիշ օրինակ մ'ալ միտք ձգեմ. ժամանակ ժամանակ Ղզգային տղաքներու Վանք երթալու ժամանակ՝ Արիաքահին հակառակ կենալը ու արգելելը՝ արդեօք Վանահաններու ատելութիւն ունենալուն համար չէ՞. Վանահաններու ճիւղը կտրի լմննա՞ ու յաջորդ չունենան ըսել չէ՞ :

ԺԳ. Հասկա եկեղեցականաց մէջ ցցուցած մեծ խտրութիւնը՝ արդեօք ան ալ Վանահանները ատելուն չար ծառին՝ չար պրտուղը չէ՞ : Աս խտրութիւնը՝ վատտակաւորի ու անվատտակաւորի, աշխատողի ու չ'աշխատողի, հոգի վատրկողի ու չի վատրկողի մէջ չէ՞ հասկա Քօլէճցիի ու Վանահանի մէջ : Վանահանը կ'արհամարհէ՞ օտարական կը համրէ, պատարագի հրամանը կը զանայ, զգետորին փոխելը կ'արգիլէ. ինչո՞ւ՝ արդեօք մէկ մեծ յանցանքի մը համար, այո՞ և ինչ է յանցանքը. վասն զի Վանահան է : Ետը հակառակը՝ Քօլէճցիին Հոռմայէն եկած չեկած՝ կը պատուէ կը պատուասիրէ, գլերին կարգը կ'անցունէ, զգետոր փոխելուն հարկ կը դնէ, պաշտօնի կը կարգէ, վարդապետական գաւազանին կը հասցունէ. մէկ խօսքով՝ մինչև եպիսկոպոսութիւն ու Արիաքահի յաջորդութեւ արժանի կը համրէ. ինչո՞ւ՝ արդեօք Ժողովուրդին հոգեւոր ինձամբը Վանահանէ մը աւելի հոգալուն համար, չէ՞ (Թերեւս Թոյլ աշխատելով՝ պատուելի Քօլէճին մեծաւորաց նախատինք և ստուած ըլլայ), հասկա՞ վասն զի Քօլէճցի է, Ղզգի վրայ տիրող Վեւտական ցեղէն է :

Լսո՛ցմէ զատ՝ դեռ ուրիշ ստոյգ շատ օրինակներ՝ յայտնի ապացոյցներ ուզելու ըլլաս նէ, անոր ժամանակ ժամանակ ըրած գործքերը ու ասկէջ ետեւ ընելիքները ընէ քննէ աչքէ անցուր, կը գտնաս՝ որ բոլորն ալ Վանահանները հալածելու նուագարանին թելին կուգան կը զարնեն :

Ժ.Գ. Հասուն Վերապայծառին ունեցած աս վնասակար նը պատակը՝ անչափ ստոյգ բան է, որ ամենեւին երկբայութիւն մը չ'վերցուներ. անոր բոլոր մտաց գաղափարները հաս կուգան կ'աւարտին: Ստածութիւնը՝ աս բանին վրայ է, թզթակցութիւնը՝ աս բանին վրայ կը դառնայ. իր ուսումնարանին մէջը գտնուած տղոց առջի համարնին է. իր կողմանը կարգաւորներուն ընտանի խօսակցութիւննին է: Հիշմանեան Վնտոն Վերապայծառին իր քահանայութեանը ժամանակ՝ անզգուշութեանով բերնէն փակցուցած Վանչլլարը պըլարը Խնմարը խօսքը՝ Հասունեանին խօսքին երկուորեակն է: Պաշատուր եպիսկոպոսին՝ Սիւնդի՝ որ Արաբանդհոսպոլոյ իեճը Վանսիաններէ լի սրբի լի մարի, ժողովորը Բեր իղըն լինի իրնար վասիլլը բսելը՝ նոյն խմորով խմորուած Հասունեանին խօսքն է: Տէվէեան տէր Յովսէփ վարդապետին քահանայացու տղոց դաս տալու ժամանակ՝ Ապիսկոպոսը՝ Սիւրաք պիլիճի պըլը ըսած խօսքը՝ նոյն Հասունեանին միտքն է: Սիւրաք Ապագուտճիեանին՝ Ախիսկոպոսը պիլիճի Բերա՝ վերելիլ պիլ որոտայը՝ Հասունեանին ծուռ վարդապետութիւնն է: Բէքմէզեան տէր Յովսէփ վարդապետին՝ Վանչլլարը պիլիճի եմալընը պըլը ըսած խօսքը՝ Հասունեանին լեզի բաժակը նարտենկի փոխել է: Ար մէկը նըշանակեմ. աս վարդապետութիւնը իբր հոգեւոր ու աստուածային եկեղեցւոյ մէջ ժողովրդեան առջեւ քարոզութեան նիւթը լլայ նէ՝ ինչ կ'ըսես: Տէվէեան տէր Յովսէփ վարդապետը՝ Յովհան Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ՝ իր քարոզութեան նիւթ կ'ընէ Վանսիան քահանային բուն հովիւ չըլլայը: Հէկեան տէր Սիւրաք վարդապետը՝ Սամաթիայի եկեղեցւոյն մէջ քերականական ստուգաբանութենէն կը հետեւցունէ՝ թէ Վանսիան կարգաւոր մը հայր կանչուելով՝ ժողովրդեան վրայ տէրութիւն չունենայը կ'ըստուգէ: Վսոնք ամենը Հասունեանին աշակերտները ըլլալով, տե՛ս ինչ նախանձով իրենց վարպետունն վարդապետութիւնը առաջ կը տանին:

Վսոնցմէ ուրիշ՝ Վոսքեւեան Յովսէփ եպիսկոպոսը իր դէմը երեսի վրայ ձգած Ստամպոլի մէջ նստելուն պատճառը ինչ էր, Վանսիաններու դատակնքին օգնութիւն մը ընելու համար չէր: Իր Ապիսկոպոսական վկայութեամբ Ախիսկոպոսին գործոցը ջատագովութիւնը ստեպ ստեպ Հոովմայի աթոռը հասցունելու մտքով չէր:

Հոպա Վարեան տէր Ստեփանին Հոովմայի քաղաքը սպա

տելուն պատճառը ինչ է : Ասոնց ամենուն վախճանը՝ Վանական ներք նուաճել ու Վանքերնուն սահմանէն դուրս չը հանել չէ : Այդեօք խելքը հասաւ հիմայ . որ քարը շարժես Հասունեաւ նին ատելութեան հոտը չի բուրեր . խեղճ Վանական քահանայ ներնուս հարածանքը շնորհնար :

Կի՛ն հիմայ բնենք փորձարարի զարնենք Հասուն Գերաւ պայծառին աս նպատակը ու տեսնանք ինչչափ պակաս է ճշմարտութեան կշիւքէն :

ԺԵ . Ո՛ղջմարտութիւնը կը սորվեցնէ որ եկեղեցւոյ մեծերը ամմեն մէկը Աստուծոյ երեսփոխաններն են . ժողովուրդը կամ եկեղեցին՝ Աստուծոյ այգին կ'օրինակուի . իսկ քահանայները՝ աս այգիին բանուորները կամ մշակներն են : Աւ ինչպէս Աստուած խորութիւն չընէր մէկու մը՝ « Օ՛ր ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս , չիք խտիր » (Գաղ . Գ . 28) ասանկ ալ անոր դեսպանութիւնը ընող եկեղեցւոյ առաջնորդները խորութիւն պիտի չընեն Վանականի ու Քօլէճցիի ու հիչ մէկ վիճակի կամ աստիճանի մէջ . ապա թէ ոչ՝ էրենց դեսպանութիւնը ըստ Աստուծոյ բրած չեն ըլլար :

Այգի մը բանուելու ըլլայ՝ մշակներու ուր տեղացի ըլլալը չը փնտուղեր , հապա կը նայվն՝ որ աշխատող ըլլան , ժիր ըլլան : Եւ եթէ անոնց մէջ ծոյլ մը գտնուի՝ այգիին տէրը արդեօք չի վարն տեր , չէ նէ Քօլէճցի է ըսելով արդեօք ակնառութիւն մը կ'ընէ :

Քրիստոս Աւետարանին մէջ այգիին օրինակը բերած ժամանակ կ'ըսէ , որ այգիին տէրը՝ առաւօտուն ժամը երեքին՝ վեցին՝ իննին ու տասն ու մէկին գտած մշակները իր այգին խրկեց որ աշխատին բանին ու վարձքերնին առնուն : Բայց ինչէ՛ն արդեօք խորութիւն մը չըրաւ մշակներու մէջ , կամ թէ ինչո՞ւ ամմենն ալ իր այգին առաւ . և մէկու մը եւս չըսաւ չարգիլեց որ այգին չը մոննա՝ չաշխատի : Աս նկարագիր օրինակին համեմատ է արդեօք Հասուն Գերապայծառին նպատակը , որ ոչ միայն խորութիւն կ'ընէ հոգեւոր մշակաց մէջ՝ Վանականը Քօլէճցիէ զատելով , այլ և չափ ալ դնել կ'ուզէ Վանական հոգեւոր մշակաց մէջ :

ԺԶ . Քահանայական սք կարգը թէ Վանականի եղեր է և թէ Քօլէճցիի՝ երկուքին ալ մէկ է : Չեռնագրուած ժամանակնին մէկը մէկալին ստորակարգեալ չեն ըսուիր : Օճման ձեւը և բոլոր

արարողը թիւնները՝ երկուքին ալ մի և նոյն է : Արապելու ու արձակելու իշխանութիւնը՝ երկուքին ալ մէկ կերպ կը շնորհուի : Արդ՝ եթէ Վանականները առաքելութեան պաշտօնէն դուրս հանենք, ունեցած իշխանութիւննին պարապ տեղ առած շէն համրովր . կամ Վանականը՝ Քօլէճցիէ բաժնել ուզած ժամանակնս՝ նոյն Քրիստոսը երկուքին բաժնել ուղել շէ՞ : Ինչպէս որ ՚ի յէնչ ասի, ես Պօղոսեան եմ, և միան ելի ես Այօղոսեան, և միան ելի ես Աբիպեան, և միան՝ ելի ես Քրիստոսեան . Իսկ արդ՝ բաժանելու ի՞նչ է ՚ի ՚ի Քրիստոս (Ա . Կորն Թ . 12) : Աս խօսքերով եկեղեցւոյ առաքեալը կորնթացիները չը յանդիմանեց . և անոնց աս կերպ խտրութիւնը ըստ մարդկան պնայք (և ոչ ըստ սափո՞ծոյ) շանուանեց (Արդ . ք . 3) : Արդեօք հիմակուան Քօլէճցիի ու Վանականի խտրութիւնը՝ նոյն յանդիմանութեան տակը չի նար : Կամ թէ առաքեալը Քօլէճեան չըսելուն համար՝ արդեօք մեր խտրութիւնը օրինաւոր պիտի համրենք :

Ժե . Քրիստոսի եկեղեցւոյ իւրաքանչիւր մեծերը՝ ամեն մէկը իրենց չափերնուն համեմատ՝ պաշտօնեայք Քրիստոսի ու հազարապետք կ'անուանին Աստուծոյ խորհրդոցը : Ասոնք Քրիստոսի հօտին բուն տէրը չին՝ հապա առ ժամանակեայ անտեսող . Բուն տէրը՝ Քրիստոս է որ յաւիտեան կայ, ինչպէս որ եկեղեցին ալ յաւիտեան կայ : Աս ժամանակաւոր յաշորդող մեծերը՝ Քրիստոսի և առաքելոց կանոնադրութիւնները ոչ երբէք կրնան եղծանել, կամ անոնց սահմանած կանոնացը՝ հակառակ կանոն սահմանել, ապա թէ ոչ՝ հօտին բուն տէրը կ'ըլլային և ոչ պաշտօնեայք՝ ինչպէս կ'անուանէ Առաքեալը :

Քրիստոսի և Առաքելոց ժամանակը՝ ոչ հաւատացելոց մէջ, և ոչ ալ՝ եկեղեցւոյ պաշտօնեայներու մէջ խտրութիւն մը կ'երեւնար թէ և ընելու ալ իրաւունք ունէին : Պօղոս առաքեալը՝ ետքէն ետքը Առաքեալներուն կարգը կը մոնայ, ու երեսպաշտութիւն չընելով՝ Պետրոս առաքեալին մեծութեանը ու Բաւնարաս առաքեալին, անոնց աւետարանական ճշմարտութեան ճանապարհէն խոտորիլը կը ծանուցանէր, Ոչ ուղի գնան (կ'ըսէր) ՚ի ճշմարտութեան աւետարանին (Գաղ . ք . 14) : Պետրոս առաքեալին աւագութիւնը՝ իրաւունք չունեցաւ Պօղոս առաքեալը յանդիմանելու թէ՛ քեղի քնչ՝ Քրիստոս իր հօտը ինձ յանձնեց, ես Քրիստոսի ընտրած բուն աշակերտներու առաջին եմ . դուն ետքէն մեր մէջը մտար և այն և այն : Այն Աւետարանական ճըշ

մարտութենէն խոտորիլին ալ՝ քրիստոնէութեան դարձող թէ՛ հրեայները և թէ՛ անթլխատ հեթանոսները մէկ կարգ չը բռնելուն համար չէր :

Եթէ նորադարձ ազգաց մէջ պատահած խտրութիւնը՝ Աւետարանական ճշմարտութեան հակառակ կ'ըսվի, հապա մի և նոյն ազգին մէջը ծնած ու սնած՝ մէկին Քօլէճցի ըսէ ընդունի, և մէկաին Սանական ըսէ զատելու ըլլայ, արդեօք Աւետարանական ճշմարտութեան ճամբուն մէջ ուղիղ գացած կըլլայ : Ի՞նչն աիրոջը՝ որ է Քրիստոս, անիրաւութիւն ըրած չի՞համարվիր, որ պաշտօնէի անունով հօտին վրայ սիրած՝ խտրութիւն կը մտցունէ մէկ Ազգին հոգեւոր մշակաց մէջ, որն որ Քրիստոս հօտին բուն տէրը չէ ըրած : Պետրոս առաքելին « Եթի իբրեւ տիրելով վիճակացն » (Ա. Ե. 3) ըսածը՝ արդեօք աս չիմացուիր : Ասանկ մէկ ինքնագլուխ պաշտօնեայ եպիսկոպոս մը՝ արդեօք Քրիստոսի և Առաքելաց ճամբուն հետեւող եմ կրնայ ըսել : Եւ ճ՛ հօտն ալ՝ ասանկ մէկ ինքնագլուխ պաշտօնեայի մը անկերպ կանոններու հնազանդելու պարտական կըլլայ :

ԺԸ. Սանականները առաքելութենէ գուրս ձգել՝ եկեղեցւոյ պաշտօններէ զրկել՝ ընդհանուր եկեղեցիին գործածութենէ օտար ճամբայ է : Առաքելաց ժամանակէն մինչեւ աս օրերը եկեղեցին հովուող, ժողովուրդը առաջնորդող, անհաւատները ու հերետիկոսները դարձունող որո՞նք եղան : Եթէ ճիշտ բնեւոր ըլլանք՝ շատր ու հատարակօրէնը Սանականները կամ կրօնաւորները չե՞նք գտնար : Ամեն ազգերուն Ապիսկոպոսները՝ Հայրապետները՝ շատր կրօնաւորական և Սանական կարգէ չե՞ն : Ստուգահաւատ պատմութիւննին, և պատկերներու մէջ նկարած անոնց կնքուղը՝ աս չիտուգեր : Հռովմայի Սրբազան քահանայապետին և իւրաքանչիւր Վարտինալաց փառաւոր հաւուստնուն վրայ ունեցած կնքուղնին՝ արդեօք խաղի համար եղած պիտի համբե՞նք, չէ՞նէ՞ եկեղեցւոյ առջի սովորութիւնը հաւատացելոց յիշատակելու համար : Ուրեմն եկեղեցին՝ որ սկիզբէն մինչեւ այսօր՝ Սանականաց արիւնով ու քրտինքով ոռոգեցաւ ու զարգացաւ նէ, անոնք աս եկեղեցիին կառավարութենէն հանելու է ըսելը՝ անլուր անիրաւութիւն չէ՞, ասերախտութիւն չէ՞ : Հապա այս օրուան օր հալածվելու ալ ըլլան ի՞նչ ըսելու է :

ԺԹ. Ազգերնուս հին պատմութիւնները ճշմարտապատում

ըզտյով տակաւին եթէ մեզ չեն համոզեր, մեր ժամանակը պատահած վերջի հարձակները միտք բերենք : Առաքելութեան սեփականուած Քօլէճցի քահանայները՝ կէս մը Ա՛ննական քահանայներու հետ Ատալիա բռնած, ու շատ մ'ալ Հոռովմայի քաղաքը ինկած՝ հոն կը բնակէին : Ստեպ ստեպ իրենց ժողովրդեան հալածվելուն՝ չարչարվելուն լուրը կ'առնուէին : Բայց աս հոգեկան վեշտէն զատ՝ ուրիշ մարմնաւոր նեղութիւն թ'նչ ունէին : Հոռովմայի հայրագութ Աթոռը՝ իւրաքանչիւրը խնամեր էր. ամէն մէկուն հանգիստ բնակարան, ու բաւական ամսըչէք հոգացեր էր, անանկ՝ որ օտար երկիր ու հեռաւոր քաղաք պանդրխտելին չ'իմացան իսկ : Բայց խեղճ Աթոռիկ ազգը՝ որուն Քօլէճցի վարդապետք տէր բոսիլ կ'սուղեն աս օրուան օրս, իրեն առաջնորդ ու հովիւ ո՞վ ունեցաւ : Անանկ վասնգաւոր ժամանակ Հօրմէն ուրիշ մարդ ո՞վ կրնաս գտնալ, որ խեղճ տառապած որդիները չը խնամէ : Ա՛ննական հայրերը չեղան՝ Քսի բսած ճշմարիտ հովիւը, որ անձերնին գրին ոչխարներու վրայ : Ասոնց մէկը՝ Վաղատիայի կողմերը, մէկալը՝ Հայաստանի քաղաքները, մէկը՝ մէկ կողմը, ու մէկալը մէկալ կողմը և ամէնն ալ Բաթարի պէս գիշեր ցորեկ բոլոր ցրուած ժողովուրդը խնամելու համար բրած ճամբորդութիւննին, քաշած նեղութիւննին, բրած ծախքերնին՝ արգետք թ'նչ կը ցուցունէ : Արդեօք աս Ա՛ննական հայրերն ալ չե՞ն կրնար Պօղոս առաքելին պէս՝ ճշմարտութիւնը խոստովանիլ ու բտել « Այնչ իւրիք պակաս իցեմ քան զիս առաքելայն » (Բ. Արն. Ժն. 5) : Հիմայ ճշմարտութեան կշիռքով կշռէ ու նայէ արդեօք Ա՛ննականները առաքելութեան գուրս ձգելու է. կամ թէ Աթոռիկ ժողովրդեան բուն ու հաւատարիմ առաքելները որո՞նք համրելու է. արդեօք Քօլէճցի բսուած հովիւները՝ որ նեղութեան ժամանած հօտին տէրութիւն չ'ըրին, չէ՞ նէ՛ Ա՛ննականները՝ որ ժողովրդեան հոգեւոր օգտին համար՝ կեանքերնին յայտնի վասնգի մէջ ձգեցին :

Ի. Ազգերնուս մէջ երեք Ա՛ննական միաբանութիւններ կը գտնուէին : Առջի ու երկրորդը՝ Աթոռեան, որոնց մէկը 'ի Ա՛ննատիկ սուրբ Վաղարու վանքը, և մէկալը 'ի Ա՛ իէննայ քաղաքը կը բնակին : Երրորդը՝ Ա՛ իբանանցի կամ Ա՛նտանեան կ'ըսուի : Առջի երկու միաբանութիւնները՝ որոնց հիմնադիրը եղաւ արգիւնաւոր Աթոռ Աբբայայրը՝ Ազգը լուսաւորելու համար կառուցուել է. թէ՛ առջի գրականութիւնը Հայոց Ազգին մէջ

կրկին մտցունելու համար, և թէ՛ առ արեւական վաստակով Մզգին օգնելու : Աս երկու միաբանու թեան ունեցած բնթացքնին իրենց հիմնադիրէն սկսեալ մինչեւ աս օրս՝ աս ըստծնիս կ'ըստուգէ . ու իրենց մակդիրնին կնիքներու մէջ Սրբի Արարի՛ Արարապետ ապաշարութեան բառերով՝ աս նպատակնին կը յուշունէ : Այնպէս Անտնեան միաբանու թեան՝ որուն հիմնադիրն է Հայր Աբրահամ վարդապետը՝ բուն վախճանը ու նպատակը ուրիշ բան չէ՛ բայց եթէ առ արեւական քարոզութեամբ ուղիղ և ճշմարիտ վարդապետութիւնը իր հայրենակիցներուն քարոզել, և զանոնք սուրբ Աթոռին հետ միացնել, որ և փառօք ալ կատարեր են և կը կատարեն միշտ :

Աս իրեք միաբանութեանց նպատակը՝ ժողովրդեան հոգևոր օգտին, կամ մէկ խօսքով ըսնիք՝ առ արեւութե՛ վրայ հիմնուած ըլլալով, թէ՛ ժամանակին Հռովմայի առ արեւական Աթոռը, և թէ՛ ժամանակ ժամանակ նոյն Աթոռին յաջորդները՝ առանձին առանձին շատ անգամ ասոնց աս աստուածային նպատակը ընդուներ են՝ հաստատեր են ու օրհններ են : Այլ հարիւր յիսուն տարի անընդհատ՝ աս առ արեւական նպատակնին շատ հոգեւոր վաստակով ՚ի դործ դնելէն ետեւ, արդեօք ետքէն ետքը Հասուն Գերապայծառին հակառակիլը՝ Հռովմայի եկեղեցւոյն կարգադրութեանը հակառակիլ չի համրվիլը : Հռովմայի եկեղեցւոյն հաւատարիմ զաւակ չէ՛ ո՛վ որ անոր ուզածին ու հաստատածին յայտնի կը հակառակի : Սանաւանդ եթէ եկեղեցւոյն ո՛չ լուիցէ՛ եկեղեցիէն դուրս համրվելուն տարակոյս չէ՛ թողուցեր Քրիստոս :

Հռովմայի եկեղեցւոյն վարդապետութիւնը՝ Քրիստոսի երկնաւոր վարդապետնուս բուն վարդապետութիւնն է, Հասունեանին պէս չէ՛ . իր որդւոցը մէջ խորութիւն չէ՛ ըրեր՝ ինչպէս որ Քրիստոսն ալ ըրած չէ՛ :

ԻԱ. Եկեղեցւոյ սուրբ պաշտօնները՝ բարձր պատիւները՝ արժանաւորագունին է . ասոր երկբայութիւն մը չ'ունինք, աս է Եկեղեցւոյ վարդապետութիւնը : Սինակ մեր Մզգին մէջ ասոր գործածութիւնը մտած չէ՛ որովհետեւ մեր մէջը արժանաւորութիւն չի փնտովիլ հապա՛ Քօլէճցի ըլլալը կը փնտովի :

Սէկ երկու տարի առաջ՝ ազգերնուս մէջ Եպիսկոպոսական Աթոռներ սահմանեցան, Եպիսկոպոսներ օծուեցան, ու դեռ պիտի օծուին, բայց ասոնք որո՞նք եղան, վախճանեկոց տեղ ու

բո՞նք պիտի յաջորդեն : Բրդէն յայտնի է . որոնց որ բաղդը հոգացեր Վանական չեն եղեր՝ անոնք են : Որովհետեւ ժամանակնուս մէջ Վանական ըլլալը քրէական յանցանոց հաւատար է : Վանական եղողը՝ նովին գործով Վերապայծառ Հատունեանին տուեալ պատիժներուն ենթակայ կ'ըլլայ . Լղգութենէ դուրս կ'ելլայ . Եպիսոպոսութեան՝ Եպիսկոպոսութեան՝ Եպիսկոպոսութեան կամ ուրիշ պաշտօններու անընդունակ կ'ըլլայ . Խոստովանանքի ու Պատարագի հրամանը կը զլսցուի . զգեստին փոխելուն հրամանը չըլլար . Ընաքելութիւն ընելու անարժան կը համրի . մէկ խօսքով՝ Ստամպոլի դուռները որ Չիֆնանէ ներս իսկ բաց է՝ Վանականին գոց պիտի ըլլայ . ու եթէ եկեր է՝ պէտք է շուտով ետ դառնան . ապա թէ ոչ՝ վերոյգրեալ պատիժներուն ամենուն ալ արժանի կ'ըլլայ :

Պօղոս առաքեալը թեւսազանիկեցիներուն յայտնի կ'իմացունէ՝ թէ իրենց հոգևոր աշխատողներու ինչ աչքով նայելու են , ու ուրիշներէն ինչչափ վեր բռնելու են . « Լղաչեմք զձեզ կ'րտէ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս և զվերակացուս ձեր 'ի տէր , և զխրատիչս ձեր . և համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոց նոցա » (Ա . Ե . 12) : Ըստ առաքելական պատուիրանին մէջ՝ արդեօք աս թէութիւնը կը գտնուի՝ եթէ ան հոգեւոր աշխատաւորները Քօլէճցի են՝ համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ , իսկ եթէ Վանական՝ ոչ : Ուր է Լղգերնուս առջի պայծառութիւնը , և ինչէ՞ն է հիմակուան նսեմութիւնը . աս անիծած խտրութենէ յառաջ եկած չէ : Ըստտուծոյ եկեղեցին ինչէ՞ն կը զարգանայ , վաստակաւոր մշակներ իրեն հովիւ ու գլուխ ունենալուն համար չէ : Հապա եթէ վաստակաւորի ու աշխատաւորի տեղ՝ մինակ Քօլէճցիի նայվի , արդեօք Ըստուծոյ ճշմարտութեան կշիռով կշռած կանոն ըսելու է , արդարութիւն ըսելու է : Պօղոս առաքելին՝ « Ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին » ըսած խօսքը՝ արդեօք մենք ալ չենք կրնար ըսել :


Հարածանքի ժամանակ իրենք զիրենք վտանգի դնող աշխատաւոր Վանական քահանաները՝ Լբբացի Հայր Դաւիթ ու Հայր Լեւոնիա վարդապետները : Վիեննացի Հայր Գրիգոր և Հայր Սերովբէ վարդապետները , Լիբանանցի Հայր Ըրիստակէս ու Հայր Լթանաս վարդապետները՝ արդեօք ասոնց մէկը ևս Եպիսկոպոսութեան արժանաւորութի չունեցաւ : Սահտարածամի վտանգաւոր

հիւանդներու հոգիներուն աշխատող նոյն Հայր Աթանաս վարդապետ ճերունին, իր ըստ Աստուծոյ սրտատու թեամբ թէ՛ ազգերնուս և թէ՛ օտար ազգաց հիւանդներու հոգևոր պաշտօնը երկար տարի ՚ի գործ տարաւ նէ, արդեօք Աստուծոյ եկեղեցւոյն մեծ օգուտ ու փառք չեղաւ ըսենք:

Քօլէրայի ժամանակ հիւանդներու հասնող նախանձաւոր կարգաւորները, ու վանական կարգէն Ալեքանձիւեան Հայր Սերովբէ վարդապետը ու Մարտիրոսեան Հայր Ռարսեղ վարդապետը ՚ի Ղպաթիայ: Շիւքիւրեան Հայր Ստեփաննոս վարդապետը և թէնդոսեան Հայր Լիզիէ վարդապետը ՚ի Պէյօղլու: Կախնեան Հայր Նիկողայոս վարդապետը, Եիւզեւքձիւեան Հայր Վրթանէս վարդապետը ու Սուրաբեան Հայր Թադէոս վարդապետը՝ յ(Օրթագիւղ: Սարբեան Հայր Ստեփան վարդապետը մինակ ՚ի Պէօյիւքտէրէյի վիճակը, արդեօք ասոնք արդիւնաւոր անձինք չի համարե՞նք: Եթէ Հասուն Քերպպայձաւոր ըստ Սոնսինեօր Հիլէրօի ապացուցութեան՝ Տօն Վասպարօ Վուչինօ Լատին քահանային՝ չարամատեան պարսաւաբարբին օգնութիւն ընելու համար, ոսկի մինտալ պարգեւեց նէ, արդեօք ան վերոյգրեալ առաքինի ու վաստակաւոր քահանայներուն՝ ու անոնց՝ որ մինչուհ ասօք խոստովանանքի՝ քարոզութեան ու հոգի դարձունելու վրայ են, ի՞նչ շնորհաբաշխութիւն ըրած պիտի չ'ըլլայ: Ի՞նչ եթէ լես՝ որ փոխան շնորհաբաշխութեան անոնց ետեւէ է, որ պաշտօնի մը չ'անցնին, ու առջեւնին գոյ ըլլայ Նախագահութեան՝ Լ'պիսկոպոսութեան՝ Եղովրդապետութե կամ ուրիշ եկեղեցական մեծութեան մը հասնելու՝ պատճառը չէիր հարցուներ: Եւ եթէ լեսիր՝ որ պատճառը ուրիշ բան չէ՛ բայց եթէ անոնց Վանական ըլլալը, չէիր սարսափիր մնար: Հապա եթէ լեսիր՝ որ ան վերոյգրեալ խեղճ քահանայները՝ ասօրուան օրը հալածվելու վրայ են, արդեօք համեմատ բառ մը կ'ունենայիր սրտիդ զգացողութիւնը իմացներ:

Ի՞նչ Սուրբ Պետրոսի անսխալ Աթոսը յաջորդող որո՞նք են. ինչո՞ւ չենք բններ: Ասանկ մէկ սուրբ ու բարձր իշխանութեան համար՝ Հռովմայի կանոնը ի՞նչ կը հրամայէ: Արդեօք մարդկային նկատմունքներ՝ ծուռ կանոններ՝ անիրաւ սահմանադրութիւններ գրված է: Ի՞նչ Աթոսը նստողը՝ Աշխարհական գղերէն պիտի ըլլայ՝ Վանական պիտի չ'ըլլայ խօսքով պատուիրան մը կոյ: Պօլսոյ Նախագահական աթոսը՝ սուրբ Պետրոսի աթոսէն աւելի

29-54182
1924



խնամվելուն պատճառը ի՞նչ է՝ բռնակալութիւն չէ՞. « Այ ուղիղ
քնան ՚ի ճշմարտութիւն աւետարանին » ըսուած խօսքը չէ՞ :

ԻԳ. Իայց աս զգուշութիւնը եթէ Վանականաց երկբայելի
զուրջութեանն համար է, ժողովրդեան մէջ աս զըպարտու-
թիւնը տարածող ո՞վ է. չարամատեան պարսաւագիրքը յորինողը
ո՞վ է : Աէկ ընտանիքի մը ներքին գաղտուկ բաները եթէ գուրս
կը հրատարակվի, ներքին թշնամիէ մը չի կարծելիք : Ազգերնուս՝
հարիւր յիսուն տարի առաջ հանդրպած դէպքերը՝ որ դիւան-
ներու մէջ միայն նշանակուած կը գտնուին, ասոնք ո՞վ կրնայ
գուրս հանել. ան մինակ որ քովը պահէր է : Օտարազգի Վա-
տին քահանայ մը՝ մէկուկէս գար առաջ պատահած շփոթու-
թիւնները ինչպէս կրնար գիտնալ, եթէ անոր ան գրուածները
չը հանուեր ու չի տրվեր : Աէկ Նախագահի մը՝ ան պարսաւա-
գիրքը ես չ'ըրի ըսելուն, Ս. Հիւլէրօ՝ Հռովմայի Սրբազան
քահանայապետին փոխանորդին՝ վկայութիւնը կայ, հաստա-
տութիւնը կայ, մէկ ամբողջ Վենետիկի գղերին հաստատու-
թեան գրուածքը կայ. անժխտելի գրաւոր ցոյցեր կան, արժա-
նահաւատ գրուածներ կան, երգուեալ վկայներ կան : Օրէնքէ
մը այլ ի՞նչ կը խնդրվի յանցաւորի մը յանցաւորութե՞ համար :
Թո՞ղ Հասուն Գերապոյճաւոր ինչչափ ուղէ գրէ իր շրջաբե-
րականին մէջ Ո՛վ որ պա՛սաւն մեզ նոյն գրոյն հեղինակ սեպել ուղէ, ու-
տա՛յի նախապաշարմանց ու մեղադրութեանց մեջ յարասե-ե, յայսինո՛ւս ճըլ-
մարտութիւնը ճանչնալ ու ընդունիլ չ'ողելը յո՛ւրոյս խօսքերով :
Իր քիչ մը վերը ըսած խօսքերը՝ աս ետքի ըսածին հաստատու-
թիւնն չեն՝ այլ դատապարտութիւնն :

Հրատարակուած պարսաւագրքին համար Աեր պահճութիւնը
յո՛ւրեւելու զանց չըրինք գրելու ըլլայ, ցուցուցած ահաճութիւնը
որն էր չը հարցունենք : Ուտի եւ ստի հոգալու յարմար միջոցներ գոր-
ծածեցինք գրելու ըլլայ, գործածած յարմար միջոցները որոնք
էին չը փնտռենք : Սալայն դժբաղդաբար հրապարակումը արգելելու վախ-
ճանին չի հասնելով պարտող ելան գրելու ըլլայ, ճշմարտութեան հետ
համեմատութիւն կ'ունենանք աս խօսքերը : Ոսկի մինտալով վար-
ճատրողը՝ աս խօսքը կրնայ ըսել : Գիրքին մեջը պարունակութեամբ նիւ-
թոյն դասասանը միշտ սորբի Անտոնի իշխանութեանը, որուն որ բողոքո՛ւս
էր, վերապահեալ լեղոյցինք գրելու ըլլայ՝ յայտնի իր անձը առաջ չի
բերեր. ուրեմն ինքն է եղեր ան գրքին մէջ Աբբայիներու հեր-
ձուածող ու հերետիկոս ըսողը՝ չէս իմանար : Այդ թէ ո՞չ գրք.

քին յօրինուածը՝ ինչպէս որ հեղինակի մը կ'ընծայէ, սոսկ ետքի
խօսքերը՝ պարը-նակը-ած ՚ի-նոյն դասաստանը՝ հեղինակը սորբ Արտին
իշխանութեանը վերադառնալ իող-ցիւր է, ասանկ գրելու չէր :

Բայց ինչ խելք չի հասնելու բան է՝ մէկ ամբողջ միտքա
նութեան մը վրայ դատաստան ընել, վճռել հերձուածող ու
հերետիկոս են ըսելով, ու աս ալ տպագրութեամբ բոլոր աշ
խարհ հրատարակել, ու ետքը սուրբ Աթոռին դատաստանը
թողուլ : Աս բանին մէջ ճշմարտութեան սկզբունքնիս ինչ է .
հաւատոյ դատաստանը միայն Նիկեոցեաց գլխին յանձնուած է
խօսքը չէ : Նիկեոցեաց գործոցը խառնուել յափշտակեալ դա
տաստան ընել է խօսքը չէ : Քրիստոսի՝ « Մի դասիք . . . և ա
ստաջիր եկեղեցւոյ » տուած հրամանին հակառակ չէ : Արդեօր
Հատեն Վերագայծաւ չի չէց ասոնք ու ետքը միտքը եկան ,
որ բանը բանէն անցնէն էտեւ Նիկեոցիին դատաստանին կը
թողու : Տեսա՞ր Վանականի խորութեան վերջին ծայրը ուր ե
կաւ հասաւ :

ԻԴ. Նկատելու ու հոգ ընելու բանը՝ Նախագահական ա
թոռը Վանականի չ'անցնիլը չէ, հապա ան մինակ՝ որ ընտրը
ված Նախագահը կամ ընտրուելու յաջորդը՝ այր ըստ սրտին
Աստուծոյ ըլլայ, որովհետեւ անոր գետպանն է : Իրեն ձեռքը
յանձնուած հօտին վրայ՝ աստուածային խնամք ունենայ : Ահա
ուսթիւն՝ աչաուսթիւն՝ կեղծաւորութիւն՝ երեսպաշտութիւն
չ'ընէ : Ինքը զինքը կենդանի օրինակ կարգէ իր հօտին առջին,
որովհետեւ հօտին գլուխ ըլլալով՝ ինքը ինչպէս է նէ, ժողովուր
դըն ալ անտարակոյս այնպէս կ'ըլլայ : Իրեն խօսքը՝ գործքը ու
ընթացքը՝ ճշմարտութեան վկայ պիտի ըլլայ : Հաւատքը՝ վար
դապետութիւնը՝ օրէնքները՝ Սրբազան Քահանայապետէն օտար
պիտի չ'ըլլայ, վասն զի անոր ստորակարգեայն է : Մէկ խօսքով՝
նուիրական անձ՝ օժեալ Աստուծոյ՝ ու հովիւ ժողովրդեան ըլլա
լուն համար, Քրիստոսի երկնաւոր հովիւն պիտի հետեւի .
ան որ բուն Աստուծոյ ու հովիւն է աս մեր զինուորեալ եկե
ղեցւոյն : Ասոնց ամենը կատարելէն ետեւ, նոյն եկեղեցւոյն օգ
տին համար ջանալու է՝ որ իւրաքանչիւր քաղաքին պաշտօննե
րը՝ բնիկ քաղաքացիներու բաժնուի արդարութեամբ : Ապիս
կոպոս՝ Աթոռակալ՝ Խորհրդական՝ Սեծաւոր ու Ժողովրդապետ
իւրաքանչիւր քաղաքին իրենց բնիկ քաղաքացիներէ գրվելը՝ Ն
իկեոցիին հիմակուան ալ սովորութիւնն է :

Հօր ժառանգութիւնը՝ բնական որդւոց է, քաղքի պաշտօն-
 մունքները՝ քաղաքացիի կ'իշնայ. գիւղինը՝ գիւղացիին. արդար
 իրաւունքն ալ սա չի պահանջեր: Իւրօքանչիւր առ իւրն՝ ըս-
 տած բնական սկզբունքին յաւէտ համեմատ չէ: Կոտանդնու-
 պօլոյ ժողովուրդն ալ իր քաղաքացի գղերին իրաւունքը փրնտը-
 ռելու ըլլայ, արդեօք Լիկեղեցիին դէմ հակառակի՞ց պիտի հա-
 մարուի: Կամ գղերը՝ իրաւամբ ունենալու պաշտօնը՝ աչա-
 ռութեամբ օտարականի ստւած տեսնելու ըլլայ, և իրաւունքը
 պաշտպանած ժամանակ՝ արդեօք անիրաւ ու ապստամբ կը հա-
 մարի: Սէկ օտարական պաշտօնաւոր մը՝ տեղւոյն սովորութիւ-
 նը՝ քաղաքացիներու բնաւորութիւնը՝ քաղաքին ընթացքը՝ բնիկ
 քաղաքացիէ աւելի կրնայ ճանչնալ: Սէկ օտարական պաշտօնա-
 կալ մը՝ տեղւոյն օգտին և զարգացմանը համար, բնիկ քաղա-
 քացիէն աւելի՝ իր աշխատանքը ու դիտողութիւնը կը խարճէ:
 Աէր հայրենեաց ըստած փոյթը՝ հոգեւոր պաշտօնին պարտա-
 ւորութեանց հետ միացած՝ արդեօք ևս առաւել չի յորդորեր
 մարդը՝ իր քաղաքին ու քաղաքացւոց աղէկութեը համար գիշեր
 ու ցորեկ աշխատելու: Բայց սա բնութիւն սորվեցուցած կարգին
 հակառակ՝ օտարականներու պաշտօններ յանձնուին, ու ընտիր-
 ներու տեղը անարժանները ու ամբաստանուածները առաջ անց-
 նին ու խօսքի տէր ըլլան, արդեօք ան նուիրական պաշտօնները
 ինչպէս կը կատարուին: Ըսոր օրինակ չ'ուղեր. դարձուր աչքդ
 հիմակուան պաշտօնաւորներու վրայ, ու ճակատնին կը կարգա-
 ամեն մէկուն գործքերը: Բանայ Հասունեանն ալ իրեն ձեռքով
 գրած յիշատակարանը, ու թէ մոռցեր է միտքը բերէ իր հի-
 մակուան սրտակից խորհրդականներուն վրայօք նշանակածները:
 Ըսոնք Բրօքականտային սուրբ ժողովքին ատեանն ալ եւելօք
 բանբաստած էին նոյն Հասունեանէն. բայց հիմա Վանակա-
 նաց կռուոյն համար հաշտուելէն զտո, եկեղեցւոյ մեծամեծ
 պաշտօններու ալ արժանաւոր համարվեցան: Ըղէկ՝ որ աշափ
 պղտիկ աղէկութիւն մը առաջ կրցաւ գալ Վանականներու կը-
 ռիւէն. ինչպէս ատեն մը Պիղատոսի ու Հերովդէսի մէջ գըտ-
 նուած Թշնամութիւնը՝ Քրիստոսի անիրաւ դատապարտութե-
 նէն բարեկամութեան փոխվեցաւ:

Սինչուկ հիմայ մեր նպատակը Հասուն Վերապայծառին
 Վանականները տկարացունելու ու ջնջելու միտքը՝ իմացունել
 էր: Ըս բաւական ցուցունելէն ետեւ, ու սա միտքին՝ ճշմար-

տուժեան կշիռքին մէջ եւելօք պակաս գտնուիլը՝ արդէն իմա-
ցուելէն ետեւ, հետեւորդ գրուածնիս՝ նոյն ճշմարտութեան
կշիռքէն՝ պակաս ելած գործքերն են, ու միանգամայն՝ ժամա-
նակնուս հանդիպած բաներուն համառօտ յիշատակութիւնը :

Ի՛նչքի՞ գ առջեւ բեր ժամանակնուս եկեղեցական ժու-
ղովքները, հոն գտնուող ժողովականները՝ խորհրդականները,
ու ետքը ճշմարտութեան կշիռքէն անցնօր անոնց տուած խոր-
հուրդը՝ ըրած վճիռնին, նոյէ՛ արդեօք ուղիղ գացած կը գտնան
ի՞ ճշմարտութիւն աւետարանին : Ինձրեաց կոնդակին գործա-
ծութեանը համար՝ որ յարեւմուտքը ևս ամեն քաղաք սովորա-
կան չէ՛՝ ժողովք կը կարգըվի, ժողովականները կը ներկայանան,
խորհրդականները կը ժողվին, ու ճշմարտութիւնը գտնալու
համար՝ անոնց հարցումն կ'ըլլայ : Արդեօք ընձրեաց կոնդակին
գործածութիւնը՝ ՚ի Պօլիս կը զօրէ՞ թէ ոչ :

Ի՛այց աս խնդրոյն լուծումը՝ Պօլսոյ շատ ժամանակէ վեր ա-
ռաքելութիւն ընող վարդապետներէ զատ ո՞վ կրնայ գիտնալ :
Եւ մի՞թէ անոնց ամենն ալ կանչուեցան : Եւ եթէ լսես՝ որ ժու-
ղովականներուն շատը՝ սրը հինգ տարի, սրը տասը՝ ու շատ
քիչը քսան կամ քսանը հինգ տարի Պօլսոյ առաքելութեան
մէջ գտնուած՝ ամենն ալ մէկ բերան կը վիայեն աս կոնդակին
շատ ժամանակէ առաջ ՚ի Աստանդնուպօլիս զօրելուն՝ թէ և
իրենք շատ տարի նստած չըլլան ՚ի Պօլիս, չէ՛ր արմնար մնար՝
ասոնց աս կերպ վիայութեանը : Ենցած գացած ժամանակի վը-
կայութիւն փնտովելու ըլլայ, բնութիւնը ի՛նչ կը ցուցնէ . ար-
դեօք քաղքիս մէջ հինցած ու հասակաւ ծերադոյն վարդապետ-
ներու կարծիքը չէ՞ : Ինքը՝ Հասուն գերապայծաուը Իրօբական
տայի քօլէճը գտնուած ժամանակ, գղերնուս ծերադոյն վարդա-
պետները՝ աս օրուան պէս՝ Պօլսոյ առաքելութեան զբաղած
էին : Արդեօք ասոնք իրմէն ու իրեն խորհրդականներէն աւելի
չէ՛ին գիտեր աս կոնդակին ՚ի Պօլիս չի զօրելուն . և ինչո՞ւ անոնց
միտքը չը հարցուց ու չի փնտռեց :

Մէկ՝ Նախագահի մը ժողովքներ ընելը, ու ժողովականաց
կարծիքը իմանալ ուղելը՝ արդեօք բաւական ցոյց չէ՞ աս կոնդա-
կին ՚ի Պօլիս չը զօրելուն : Եթէ՛ զօրելու ըլլար՝ ինչո՞ւ ժողովք
ընելու կը կարօտվի կոր : Ինքը՝ Նախագահ օրէնսդէտ ըլլալով
կոնդակին զօրելուն վրայ եթէ տարակուսի, արդեօք նոյն կոն-
դակը զօրած կ'ըլլայ : Եօրէնս ի՛նչպէս է . պատժական օրէնքը

յերկբայութեան մէջ ի՞նչպիսի կը գորի :

Ընկեց ուրիշ՝ արեւելեան չորս Պատրիարքներու տակ գլու նուազ հպատակները՝ արդեօք կը պարտաւորին՝ Քահանայապետներու նոր սահմանադրութիւններուն : Աս խօսքիս վրայ յամին 1631 յուլիս 4 Հռովմայի մեծարգի ժողովը ի՞նչ վճռեց՝ թող ազէկ անկեա՞ զնէն հակառակը հաստատող ժողովական վարդապետները « Հպատակք չորից Պատրիարքաց արեւելից՝ ո՞չ պարտաւորին նորովք սահմանադրութեամբք քահանայապետաց , որայց միայն յերիս գիպուածս : Այսին՝ ՚ի նիւթ վարդապետութեանց հաւատոյ : Արհորդ՝ եթէ Պապն յայտնապէս ՚ի սահմանադրութիւնս իւր գլխատակութիւն և զվարդագրութիւն որինչ արասցէ զնոցանէ : Արհորդ՝ եթէ լռելեայն ՚ի սահմանագրութիւնն յայտնիկ կարգեսցէ ինչ վասն նոցա . որպէս ՚ի գիպուածս բողոքմանց առ ապագայ ժողով » : Արդ աս ասանկ վճռովելէն ետեւ , կը հարցունենք՝ աս ընթրեաց կոնդակը՝ արդեօք հաւատոյ նիւթ է . կամ թէ աս ընթրեաց կոնդակին մէջ արեւելցոց համար յայտնի գրած բան կայ . կամ լռելեայն արեւելցոց համար բան մը կարգեր է :

Ի՞նչ ասանք միթէ Հասուն գերապայծառը չէր գիտեր . հապա գիտնալով երեսպաշտ խորհրդականներու ծուռ խօսքին հետեւելը՝ Վանական կողման աշխարհականները ճնշելու միտքի համար չէր :

Այն ի՞նչպէս հնարէ ըլլալու՝ որ դատաւոր մը բուն իր դատին դատաւոր նստի , օրէնքները բուն իրեն դատին քաշէ , դատախազութիւն ընէ , վիսյի գործք բունէ , վերջապէս՝ վճիռ տայ իր դատին արդարութեանը : Արդեօք աս նոր կերպ դատաստանական ընթացքը՝ Պողոս առաքեալին՝ « Աչ ուղիղ պնան ՚ի ճշմարտութիւն աւետարանին » ըրած յանգիմանութեը տակ չլինար :

Ի. Զ. Ո՛ր էր որ այսպիսի ժողովներու մէջ Ալեքիսային պես անաչառ ըսող մը ունենար Հասուն գերապայծառը , որ ուրիշ խորհրդականներուն ծուռը շիտակի տեղ վիսյած ժամանակնին , բուն ճշմարտութիւնը համարձակ ու յայտնի ծանուցանէր : Ի՞նչ փոփոխակի՝ արդեօք ինքն ալ Ա. քաաբին պէս ժողովականներու կատարեալ ազատութիւն կը մատուցանէ՞ , բուն ճշմարտութիւնը անաչառ ըսելու : Արնայ Ա. քաաբին սա գեղեցիկ խօսքը իւրաքանչիւր ժողովականներու ըսելու « Օ՛ր խօսեսցիս ընդ իս ճշմարտութեամբ յանուն Տեառն » (Գ . թ. ա. 4 . ի. ք . 16) :

Երեսպաշտութիւնը՝ աս օրերը անխտար զօրացեր ճանբոյ աւեր քալեր է, որ աւետարանին մէջ պատմուած կուրին ծնողացը նման ժողովրդենէ դուրս չ'ելլալու համար, ինչպէս որ անոնք չուզեցին Վրիստոսի իրենց զաւակը բժշկելը յայտնի զուրջել, սասնկ ալ ժամանակիս երեսպաշտները՝ եպիսկոպոսին կողմէն դուրս չ'ելլալու համար, ճշմարտութիւնը սիրաբերուն մէջ կը ծածկեն կը թաղեն. ու բերնով եպիսկոպոսին ինչ որ հաճելի կը կարծեն՝ ան կը խօսին : Արտերնին մէկ կերպ է խօսքերնին ուրիշ կերպ :

Ընկէց է՝ որ նոյն մարդուն համար կը ըսենք կը տեսնանք՝ որ մի և նոյն բանի վրայ՝ երբեմն մէկ կողման և երբեմն մէկալ կողման իրաւունք կուտայ : Երբեմն ստորագրութիւն կուտայ Հասուն գերապայծառը յանցաւոր կը դատէ, և երբեմն տուած ստորագրութիւնը ետ կ'առնէ, ու հակառակը կը հաստատէ : Ըսենք առաջնորդողը ճշմարտութիւնը չէ, այլ ժամանակիս պարագաները, որ ինչչափ ու ինչ կերպ փոփոխվի դառնայ, իրենք ալ անոր հետ կը փոփոխին կը դառնան :

Իէ . Բայց աս պակասութիւնը՝ որ ոմանց եկեղեցականներու վրայ առաւելագոյն տիրած կ'երեւնայ նէ, արդեօք գլխէն առաջ եկած ակտ մը չը համրուիր : Այն ազգի մը՝ Նախագահը՝ ճշմարտութեան ճանբայէն խտորած՝ Ըստուծոյ չը դատածին մէջ խտրութիւն մտցունէ ու աչառութիւն ընէ, անոր աս վրնասակար օրինակը՝ արդեօք հօտին գայթակղութեան առիթ չըլլար : Եթէ իրեն սուրբական՝ բերանը բանեցուցած խօսքը Որպիսի է չաւանայն՝ այնպիսի է և ժողովուրդն՝ ճշմարիտ սկզբունք բըւներ է, աս սկզբունքէն ալ աւելի ստոյգ աս խօսքը չէ՝ Որպիսի է եպիսկոպոսն այնպիսի է և չաւանայն : Ու ասանկ թէ ժողովրդեան, և թէ գղերին անկարգութեանը՝ ինքը պատճառ եղած չի համրուիր : Այն Նախագահի մը՝ մէկ եպիսկոպոսի մը ՚ի պաշտօնէ ընելու գործքը՝ արդեօք աս խտրութիւնն է : Ինքը աս մենծ արժանաւորութե հասած օրէն մինչուկ աս օրս՝ Եկեղեցւոյ օգտին համար, իր հօտին դարգացմանը համար՝ աս խտրութեան որոմը ցանելէն ուրիշ ինչ ըրաւ . հօտը ինչպէս խնամեց :

Իրեն ըրած գործքերուն մէկ բանին՝ արդէն վերը նշանակեցինք, անոնցմէ չմտացուիր իր հօտը ինչպէս առաջնորդելը, արդեօք ուրիշ օրինակներու կը կարօտինք :

Եղգայետութեանը ժամանակ իր ձեռքը յանձնուած ժո

զովրդեան համար՝ թաղաւորութիւն կանգնելու միտք ունին խօսքով Քարծրագոյն Ղրան անցնիլը՝ ու բովանդակ աղբը՝ տէրութեան վրիժուց վտանգի տակ ձգելը՝ արդեօք իր հովուական պաշտաման համաձայն ըրած կ'ըլլայ :

Մէկ եպիսկոպոս մը՝ Քրիստոսի հօտին նուիրուած հովիւ է . անոր օրը՝ ժամանակը՝ ու կեանքը իսկ՝ ժողովրդեան օգտին պիտի կարգի , “ Հովիւ քաջ զանձն իւր գնէ 'ի վերայ ոչխարաց ” : Ըստ աւետարանին ճշմարտութեանը հակառակ՝ եթէ Հասուն Ղերապայծառը ժամանակ որոշէ , օր կարգէ՝ որ աս օր՝ սա ժամ ժողովրդեան անկաճ կու տամ՝ ու բիշ ժամ ո՛չ , ու աս նոր կերպ հովուական կանոնը իր բնակարանին կամ տանը ներքին սեմոց քով կ'սխեղ տայ , ու ճիշդ պահելու նայի . արդեօք հովուական պաշտաման համաձայն ըրած կ'ըլլայ :

Օրթագեղի Առսաւորչայ եկեղեցիին՝ մէկ մարդկային նըկատման համար Ըագ ուրբաթ օրուան քարոզը արդիւիւրը , և ժողովուրդը անանկ օր՝ Քրիստոսի արդիւնաւոր չարչարանաց քարոզէն զրկելը՝ արդեօք հովուական պաշտաման համաձայն է :

Հակառակութեան հոգևով սովորական օրերէ դուրս՝ Ղաւթիայի Յիսուս փրկիչ մայր եկեղեցին՝ զինուած Վրացիներով , և անոնցմէ չջնայատած՝ ձայնաւոր պատարագ ըսելը , ու ետքը նոյն Վրացիներու ընկերակցութեամբ Պէյօղլու իր տունը դալը , արդեօք Պօղոս առաքեալին մէկ եպիսկոպոսէ մը պաշանջած՝ հեղ ցած ըլլալուն նշան է , թէ աշխարհօրէն սպարաւ պետութեան հանդէս մը :

ԻԸ . Մէկ Քրիստոսի ոչխարաց հովիւ մը՝ իր հօտը ասանկ երեսի վրայ ձգած , հովուական պարտքերու հակառակը ընելու ըլլայ , խեղճ հօտին վիճակը արդեօք ո՛ւր հասած կ'ըլլայ : Ընդամ մը դարձուր աչքդ խեղճ Կոստանդնուպօլսոյ ժողովրդեան վրայ , նայէ ի՞նչ բաներ կը տեսնաս :

Ըղբասները երեսի վրայ ձգուած՝ աս դին ան դին կը տուայտին : Ըստ հանապազօր կռիւներէ՝ անոնց դատերնուն որոշմանը՝ Պատրիարքարանը ժամանակ չըլլար . անոնց օգնութիւն մը ընելու խելք չը բանցրիլը . աս բաներուն՝ ո՛ւր է մտածող , ո՛ւր է հոգացող : Որբերու այրիներու ինչքերը կը յափշտակվին , ու յայտնի զրկողութիւններ կ'ըլլան , ո՛ւր է հոգացող սիրտ : Մէկը Ատօնի դաւանանքի կ'անցնի , մէկալը զաւկրները Ատօնի մը կրտեղ կու տայ , մեւելը վերցնել կու տայ . միւսը Ատօնի պսակ

կըլլայ, նման բարորովին Քրիստոսի խօսքին « Հարից զհովուսն, և ցրուեսցին ոչխարքն » :

Ըստնցմէ ուրիշ Սամաթիայի եկեղեցւոյն մէջ սուրբ Հազոր-
դու թիւնը կ'անպատուի : Ա երջին օժման սուրբ անօթը՝ նուի-
րական ձեթովը մէկ տեղ՝ բիանքոյի կը դրուի, ու վաբօրի մէջ
մէկ ծայրէն մէկալ ծայրը աշխարհականաց ձեռքը կը պարտի :
Հարսանիքի մէջ քահանայ քահանայի դայթակղական արհամար-
հութիւնն ու բռնութիւնն կ'ընէ աշխարհականաց առջեւ, ու
քանադրանքի սակ խնարանն ազդ ընող չըլլար, պատժող չըլլար
(կ'երեւնայ որ եպիսկոպոսի ծանուցագիրը պատուելու չափ չէր) :
Հոգիները հագարու պատրուակաւ ծխատէր քահանան տունի
տէր կ'ըլլայ : Վատարագի թոշակի պատճառով հոգեվարքին սըն-
տուկը կը բացվի, մէկալը՝ նոյն վախճանով մեռնողին իրքերը խօւ-
թուխը կ'առնէ կը տանի, ու տահա ասոնց նման բաներ ինչ-
չափ կուզես՝ դրամ կը գտնաս Հասուն գերապայծառին յիշա-
տակարանը :

Ի այց Հասուն գերապայծառին իր հօտին մէջ պատահած
աս անկարգութիւններու չը դիտելուն պատճառը ինչ է. ինչ
բանի զբազած կեցած է գիտես. Անուականները իր թեմէն
հանելու ջանքին վրայ է : Իս իրեն նպատակը՝ կամ թէ ըսենք
հովուական պարտքը կատարելու համար, ուրիշ մէկ բանի մը
անկաճ չի կրնար տալ, ատեն չունի, սա՛ օր՝ սա՛ ժամ՝ ժողո-
վրդեան կրնամ նայիլ՝ ուրիշ ժամանակ չէ՝ խօսքերով ծանու-
ցում իսկ ըրեր է :

Ի՞նչ. Առաջնորդի մը բարի օրինակը՝ ինչչափ որ հպատակնե-
րու մենծ յարգօրանք է նէ, չար օրինակն ալ անխտար անոնց
կործանում կը սեպուի : Չրկայ բարի կարգադրութիւնները՝
բարի սովորութիւնները աւրող աւելի բան մը՝ ինչպէս մեծին
չար օրինակը : Գառաջուց մեր մէջը եկեղեցականներու պատիւ՝
յարգ՝ ակնածութիւն՝ ու անոնց հրամանացը միամիտ ունկն-
դրութիւն՝ գրեթէ ազգերնուս սեփականուած կնիք մը եղեր
էր : Ի այց աս օրուան օրը ար գեղեցիկ առաքինութիւնը ազ-
գէն վերնալու պատճառը՝ Հասուն գերապայծառին քահանայ-
ները մէկ ստրկի ընելը չէ՞. արծաթագին ծառայէ մը վար բը-
նելը չէ՞. ասոր ալ օրինակ կուզես, քանի՞ հատ : Քահանան աշ-
խարհականին հետ մէկ տեղ Հասուն գերապայծառին այցելու-
թիւնն ըրած ժամանակինն՝ անոր առջի բարեւը պատուով աշ-

խարհականին տալը ի՛նչ կ'իմացունէ . առ ջի պատուաւոր տեղը աշխարհականին շնորհէլը , զանոնք մեծարել պատուելը , ու քաղաքական պատիւները անոնց շնորհէլը ի՛նչ կը ցուցնէ : Խեղճ քահանան՝ որ նոյն աշխարհականներու՝ կամ տան երէց է , կամ հոգաբարձու կամ սոսկ քահանայ՝ Պիղատոսի ատեանը կեցող իր երկնաւոր վարդապետին՝ Քրիստոսի նման ոտքի վրայ կեցած՝ նստելու տեղ չի գտնար նէ՝ արդեօք ծառայի կարգ անցնիլ չէ՞ :

Քահանան իր ժողովրդեան հարկի մը համար եպիսկոպոսին կ'երթայ հրաման մը խնդրելու , եպիսկոպոսը կը զանայ . նոյն ժամանակ՝ աշխարհականը կը լսէ եպիսկոպոսին զանալը , ու չք հաւտարով մը քահանային խօսքին՝ ինքը կը ներկայանայ , ու խնդրած շնորհքը առաւելութեամբ ընդունելու ըլլայ նէ , արդեօք խեղճ քահանային յարգը մէկ ստրկի ընել չէ՞ : Ասկէց ուրիշ՝ իրաւամբ կամ անիրաւ աշխարհականներու առջին քահանայները յանդիմանելը՝ սա ըսածնիս չմտուգեր : Այն իսկ պատիժներու եղանակն ալ հրապարակաւ չէ՞ : Օսածու կ'յանցանքը ծածուկ յանդիմանովիլ , յայտնին յայտնի . մեծ յանցանքին մեծ պատիժ՝ պղտիկին պղտիկ , ասոնց համար Քրիստոս և առաքեալք առանձին կանոններ սահմանած չէ՞ն . և միթէ մինակ Հասուն գերապայծառի՛ն անձանօթ է սա կանոնները : Աէկ քահանայի մը՝ պատարագէ ու խոստովանանքէ զրկովիլը՝ պատիժներու մէջ ամենէն մեծն է . ու ՚ի հարկէ մեծ յանցանքի մէջ գտնուող քահանայի հարկաւոր կ'ըլլայ : Բայց սա օրուան օրը՝ Վանականի մը ՚ի Պօլիս՝ իւր հայրենիքը գալը , անանկ մէկ մեծ մեղքերու կարգն է , որ պատիժն ալ նովին գործով՝ ըսուած եկեղեցական բանադրանքներու նման՝ պատարագը առնվիլն է , ու հին օրինաց խտուրթեան պէս՝ առանց ողորմութեան կը համրի :

Ղշմարտութեան սկզբունքներու տեղեակ ըլլողը՝ թող քննէ՛ նայի՛ սա եղածները , արդեօք արդար կչո ով եղած գործք կը գտնայ : Կամ թէ սա գործքերէ աշխարհականներու գայթակղութիւն ու եկեղեցականներու արհամարհութիւն ու անպատուութիւն չը՛ծագիր . կամ թէ հիմակուան եկեղեցական անուան պարտաւիլը՝ Հասուն գերապայծառին անկարգութիւններուն պտուղը չէ՞ :

Լ. Բայց թէ Հասուն գերապայծառին եօթը տարուան խըռովութեան պտուղները մինակ ասո՛նք եղան . ուրիշ այլ մեծ քեաններու պատճառ չեղա՞ւ ըսենք : Սրբազան Քահանայապետը՝

հաւատքնուս երեւելի գլուխը բամբասել չը տուան . անոր յար-
քը բոլոր արեւելք չ'անչքացնց . իր հօտը սուրբ աթոռէն պա-
ղեցնելու առիթներ չը տուան :

Կոտաիը հոգեւոր է ու եկեղեցական իշխանութեան կը վերա-
բերի ըսելով , բոլոր ազգաց առջեւ Հռովմայի կոտակներու նօ-
տարով ըլլալու սովորութիւնը՝ Սրբազան Քահանայապետներուն
իրենց պաշտաման մէջ՝ բաւական հսկողութիւն չ'ունենալնուն
համար բամբասել չը տուան :

Ըզգերնուս օծուած Քօլէճցի եպիսկոպոսներու ընտրու-
թիւնը՝ ազատ կամօք , ու յանուանէ Սրբազան Քահանայապե-
տէն եղած է ըսելով , բոլոր ազգաց առջեւ սուրբ Քահանայա-
պետը կողմնակալ ու աշառու բամբասել տալու առիթ ըտուան :
Յոբելեան ներսողութիւնը սխալմունքով ազգերնուս չեկած ժա-
մանակ՝ Սուրբ Քահանայապետը Հայոց ազգին բարկանալուն
համար՝ նոյն ներսողութիւնը զլացեր է խօսքերով հրատարակեց
նէ , ասով մեծին ու պզտիկին առջին եկեղեցւոյ Սրբազան Գը-
լուխը սխալալութեան ախտիւ զբացուած ըլլալուն համար
բամբասել չը տուան :

Մէկ ժողովրդեան գլուխ մը՝ մէկ Նախագահ եպիսկոպոս մը՝
իր դիմունքները առաջ տանելու համար , եկեղեցւոյ գլուխը
իր գործքերուն պատրուակ ընէ , իր արատաւոր գործքը անոր ըն-
ծայէ , անմտազրութեամբ հանդպած բան մը՝ չար կողմը մեկ-
նէ , արդեօք ասոնցմով իր ժողովրդեան Սուրբ Աթոռէն պաղե-
լու առիթ տուած չ'ըլլար . անոնց սիրոյ հսկումը աս Սուրբ Ա-
թոռէն նուազել չ'իտար . Սուրբ Աթոռին ալ յարգը կոտորոյ
չ'ըլլար :

ԼԱ . Բայց հոս ըննցան ըսենք Հասուն գերապայծառին տը-
ւած փնասները : Եթէ աստանութիւն մնաց՝ որ Հասուն գերա-
պայծառը ազգէն չ'անցնի Սրբազան Սուրբ Հօր : Օրպարտու-
թիւն մնաց որ չընէ : Բայց ասոնք որո՞նք են :

Ըրդեօք Նախագահի ընտրութեան համար՝ ազգին իրա-
ւունքը պնդելնիս է :

Ըրդեօք եկեղեցեաց ազատ տուրքին հաշիւը՝ ազգին կը վե-
րաբերի ըսելնիս է :

Ըրդեօք կոտաիը՝ աշխարհական իշխանութեան կը վերաբերի
ըսելնիս է :

Ըրդեօք Վանականի ու Քօլէճցիի մէջ խտրութիւն մը՝ ու-

լայ բսե ընիս :

Արդեօք եկեղեցական պաշտօնները՝ առանց աչառութեան արժանաւորագունին տրուի բսե ընիս է :

Ազգը ասոնցմէ զատ այլ ի՛նչ կր պնդէ : Ասոնց ո՞րը Սուրբ Աթոռին դէմ է : Մեր ազգը մինչեւ այսօր ի՛նչպէս վարուեցաւ : Արեւելեան սովորութիւնները ի՛նչպէս են : Այն ազգք իր բարի ծէսերը՝ սովորութիւնները պիտի պահէ ըսողը՝ նոյն Սուրբ Աթոռը չէ՞ : « զՅունաց՝ որք բնակեալ են յարեւելս ընդ ՝ իւրեանց ուղղափառ եպիսկոպոսօք . . . և զայլոց աղանց Քր. ՝ ըրիտանէից՝ զինչ ծէսս և ունիցին ՚ի սուրբ աթոռոյ հաւատնեալս կամ թողլ տուեալս , զո՞ և իցէ զիրաւունս՝ որ նոցա յիւրաւանց կամ ՚ի սովորութենէ կամ այլուստ զիարդ և իցէ օրիւննօք պատշաճիցի . . . ոչինչ իւրք իրօք դիտեմք վտարել կամ զնաս ինչ այնց հասուցանել » ըսողը՝ նոյն սուրբ գահը չէ՞ . (Ի ինքնախօսքի . յօդ 9 . համար 24 . հար ամ .) :

Հռովմայի աթոռին հարազատ զաւակ ըլլալու համար , արդեօք ազգային սովորութիւնները , սոքի ամի պիտի առնվին : Սուրբ գահը արեւելեան ազգերէն հաւատոյ ուղղութենէ զատ՝ այլ ի՛նչ բանի կ'սպասէ : Հիմակուան Թ . Պետո Քահաւ նայապետնուս յունուար 6 1848 ըրած կոնդակին խօսքն ալ՝ հոս չի ըմնար « Սահմանեմք մի ինչ աւելի բեռն գնել ՚ի վերայ ՝ ձեր , բայց միայն ՚ի կարեւորացս այսոցիկ , այս է՝ ՚ի դառնալ ՝ ձեր ՚ի մի միաբանութիւն , և ընդ մեզ համամաք և միաբանք , ՚ի խոստովանութեան ճշմարիտ հաւատոյ ըստ կաթոլիկէ եկեղեցւոյ , ունել զհաղորդութիւն ընդ եկեղեցւոյն և ընդ այս գերագոյն Աթոռոյ Պետրոսի : Սին իրի յարարու զութեանց անտի ձերոց զայնտիկ միայն պարտ է ՚ի բաց թողլ , որք թերեւս հակառակ ուղղափառ հաւատոյ , և միութեան կաթոլիկէ եկեղեցւոյ ՚ի ժամանակի բաժանման անդ ՝ սպրդեալ մտին » : (յերէս 13) :

Ասոնք ասանկ վճռը վէլէն ետեւ , արդեօք հաւատքնուս մէջ պահասութիւն ըրած կ'ըլլանք եթէ աս կոնդակներու ուժով իրաւունքնիս փնտաենք :

Ազգին ունեցած վէճը Հասուն գերապայծառին հետ՝ ինչչափ որ վերը նշանակածնիս կը համբին ու ուրիշ բաներ չեն , նոյն Հասունեանը՝ իր սովորական խորագիտութենով ուրիշ կերպ իմացուցեր է Սրբազանին՝ բուն վէճին հոգին :

Մէկ Նախագահ եպիսկոպոս մը՝ ժողովրդեան վրայ կորգած հովիւ մը՝ պաշտօնական եղանակաւ՝ իր ձեռաց տակ գտնուող հպատակներու վրայօք հերձուածողութեան ու հերետիկոսութեան ճանապարհն են՝ վկայելու ըլլայ, ասկէց ուրիշ Սուրբ Քահանայապետը տրամեցնող բան ինչ կրնաս գտնալ : Եւ միթէ աս չէ՞ ամբաստանութիւններու բուն գլխաւորը : Ըբբայի վարդապետները՝ Վանական վարդապետները՝ օտար վարդապետութիւն ունին, գայթակղական ընթացք ունին, հերետիկոսներու ջատագով են, մէկ խօսքով՝ պարսաւագրքին մէջ յայտնապէս՝ Ըբբացիները Յանսենեաններէ գէշ են ըսողը՝ Հասուն գերաւ պայծառ չէ՞ : Կոստանդնուպօլսոյ աշխարհական ժողովուրդը՝ Վանականներու ուժ կուտան և փոփոխակի անոնցմէ ուժ կ'առնեն : Վանականներու հետ մըլրած են, հերետիկոսներու ջատագով են խօսքերով անուներին աշխարհքին առջին չաւրեց :

ԼԳ . Ըզգը աս եօթը տարուան թշուառութեան մէջ՝ քանի քանի անգամ իր արցունքոտ աչքերը տնկեց իր գթած հօրը Սրբազան Քահանայապետին, որ աս նեղութեանը դարման մը հնարէ : Ըտեն ատեն աղերսագիրեր գրուեցան, ժողովրդեան մեծամեծները իրեն ինկան, քահանայները իրեն վազեցին, ու թէ քաղաքացի աշխարհական ու թէ քահանայք խնարհ աղաչանքով աս ազգերնուս մէջ պատահած վտանգաւոր վերքին բըւ ժրշուութիւնը խնդրեցին : Ըայց իրենց խորագէտ թշնամիին Պ . Հասունեանը՝ իրեն հնարքներովը անօգուտ հանեց աս աղերսագիրերուն զօրութիւնը : Աւտի այս անակ ժողովուրդը՝ աւշտի ժամանակ իր աղերսագիրերուն պատասխանը երկար ժամանակ չ'առնելուն համար, այլ և այլ օտար ազգաց առջեւ ծաղր և ծանակ եղաւ :

Եւ այսպէս՝ սուրբ Լիկեղեցւոյ թշնամիները՝ հանապաղ նախատելով մը կ'ըսէին Որ հայրը պիտի ըլլայ՝ որ որդոցն հասալանացը անկամ պաւ չ'ողէ : Ըյս է յեր պարծեցած հայրերիդ : Ըստո՛ւմ իսկ՝ հին պիտի չ'ըրեայ ապառո՛ւմ ժողովրդեան իրեն բան մը հարցո՛ւելն ըլլար, պապասխանը ամեն անգամ շո՛ւրտ կո՛ւտար . իսկ Սուրբ Ընտրը Ըստո՛ւմ ալ մե՛ծ եղա՛ւ : Ըայց Հասուն գերապայծառէն հերետիկոս բամբասուած Պօլսոյ կաթողիկ ժողովուրդը՝ աս մեծամեծ փորձութեանց մէջ՝ իր հաւատոյ հիմը սուրբ Պետրոսի անշարժ աթոռը հաստատած՝ հաստատուն ու անխախտ պահեց ու կը պահէ միշտ իր կաթուղիկէ հաւատքը, և իրեն ուղիղ հաւատօցը ճանապարհէն խտտ

րիւ յոնձը չ'առնէր : Թէ և ուրիշները զինքը սրբազան քահանայապետին որդիութենէ օտար քարոզէն , ինքը՝ կը խոստովանի անոր մեծութիւնը , կը յարգէ անոր Պետրոսեան աթոռը : Ընչաւ աս է՝ հերետիկոսներու միտումն ունեցող Հասուն գերապայծառէն բամբասուած Կոստանդնուպօլսոյ Կաթօլիկ ժողովրդէան խոստովանութիւնը՝ թէ եկեղեցականներու ըլլայ և թէ աշխարհականներու : Երանի՛ թէ լսեր աս Բրօքալիանտայի սուրբ ժողովքն ալ , որ Հասուն գերապայծառին հնարքներէն խաբուած , Վանականները իտրթ դաւկի պէս ամեն կողմէն ճնշելու վրայ է : Ընչը կը գիտէ կը նայի՝ սր ան առջի շնորհաբաշխութիւնները , առջի արտօնութիւնները , առջի միաբնակարութեան կոնգալները՝ ալ շնորհել չուզէր իր Վանական վարդապետներու . թէ և Եսորի՛ Սառսի՛ Եսն վանական կարգաւորներու վայելել կուտայ : Ըրգեօք աս ալ Հասուն գերապայծառին պըտուղները չե՞ն :

Ըր . Ընչ ինչէ՞ն է որ Հասուն գերապայծառը Սրբազան Քահանայապետին յարգը կտրելէն ետեւ , Բրօքալիանտայի անունը՝ արեւելք անշքացունելէն ետեւ , մէկ խօսքով՝ արեւելք ու արեւմուտք մէկզմէկ խառնելէն ետեւ , տակաւին Հոռոմայի շնորհքը կը վայելէ : Ըստ պատճառը ինչպէս վերը ըսինք՝ նոյն Հոռոմայի աթոռին առջին մեզ եւելօք կտրելն է : Սեղ հերձուածող ու հերետիկոս ամբաստանելուն համար՝ նախանձաւոր մը համարվիր է : Սեծ յարգ մը՝ ապահովութիւն մը ըստացեր է անոնց առջին . անանկ՝ որ Բրօքալիանտայի քօլէճին աւշակերաններէն ալ ըլլալէն՝ կաաարեալ ապահովութիւն մը կը ժառանգէ :

Գ . Հասունեանին աս օրուան օրը չափէն աւելի Բրօքալիանտային գիրկը իննալն ալ՝ իր հեղինակութիւնը աւելցնելու համար ու գիտմութները առաւել ևս գիւրջին առաջ տանելու համար է :

Հոռոմ՝ Հասուն գերապայծառին ինչ ըլլալը չը կրնար ճանչնալ , մինչուկ՝ որ Կոստանդնուպօլսոյ Կաթօլիկ ժողովրդէան վերայօք ունեցած նախապաշարմունքները մէկ գի չի նետէ : Ընկէց ետեւ կ'իմանայ՝ որ հիմակուան պատահածները Խփախ մօնսին ետ Ըբրահամ Քաշուսին մէկ ուրիշ օրինակն է :

ԸԵ . Պօղոս առաքեալը առաջնորդի մը պարտաւորութիւնը՝ հոգիներու փրկութեան ջանքը կը նշանակէ՝ « Օ՛ր նոքա տքնին

վասն ոգւոց ձերոց » խօսքերով : Արդեօք առաքեալին միաբէն կ'անցնէր՝ որ ժամանակ մը անանկ (Նաջնորդ մը պիտի ըլլայ) որ իր ծուռ գիտմունքը առաջ տանելու համար, իր հօտին ուղղափառութեան անունը պիտի կտորէ, հոգի շահելու տեղ՝ հոգիներու վնասովը պիտի ուզէ : Այնք զրպարտութեան խօսքեր չեն՝ հապա ժամանակնուս բուն պատմութիւնը :

Աս վերջին ատենները Հայ կաթողիկ ազգը Հասուն գերապայծառէն բաժնուիլ ուզելին լավեցաւ նէ, գիտէն ինչ ազգեցութիւն ըրաւ Հասուն գերապայծառին, կարծելով որ կաթողիկ ազգը իր ձեռքէն ազատելու համար՝ կաթողիկէ հաւատքնին պիտի ուրանան, Չիւրի-ի սաղը պէլլէ օլտոն խօսքերով ուրախացաւ, ու Հռովմ գրեց՝ բանը աւելցնելով, մէկին վրայ մէկ մ'ալ դնելով : Քիչ ժամանակէ ետեւ՝ երբ որ աղէկ իմացաւ՝ որ աղբին բաժնրվիլը՝ հաւատքէ չէ՝ այլ իր բռնութենէն ազատելու համար է, տրտմութիւն առաւ ղինքը, սկսաւ հարցունել խորհրդականներուն՝ մտածել, հոգալ, ու դեռ գլուխ չառնէր մտածելէն : Աս հոգը՝ մտածութիւնը՝ երբ որ հաւատքնէն բաժնուէին պէտք էր ունենալ, չէ թէ՛ հաւատքնուն մէջ հաստատ կենալով, մինակ իրեն իշխանութենէ բաժնուիլ ուզած ժամանակնին :

Ասոր նման երկու այլ դիպուած յիշատակեմ՝ որ բնաւ երկբայութիւն չ'ունենաս ըսածիս վրայ : ()րթագեղի ժողովորդը Հռովմայէ եկած թուղթի մը հաւատարմութիւն ունենալու համար, իրենց մեծաւորը կը պնդեն՝ որ քիչ մը առաջ Աթոռա կալ վարդապետին հրամանով եկեղեցւոյ մէջ կարգացուած թուղթը՝ իրենց ցուցունէ : Այնօրինակ և Վաթիոյ Հիսուս Փրկիչ եկեղեցւոյ աւանդատան մէջ՝ ոմանք ՚ի ժողովրդէնէ՛ն Ախաբահին՝ ժողովրդապետութեան համար կախած կոնդակը՝ կը խորտակեն :

Հասուն գերապայծառը՝ աս երկու եղածները վերցրեալ եկեղեցիներուն Սեծաւորներէ սուղեքէն ետեւ, ան շփոթութեան ժամանակ արդեօք ձեզի ձեռք վերցնող եղաւ՝ զարնող եղաւ՝ փնտռելով մը կը հարցունէ անոնց, ու բացասական պատասխանը առնելէն ետեւ, փոխանակ Աստուծոյ գոհութիւն տալու՝ որ ժողովորդը մեծեղեռն յանցանաց մէջ չէ ինկեր, ցաւելով մը՝ ուր էր թէ ձեզ ձեռք վերցուցած ըլլային՝ կ'ըսէ : Տեսար իմացար հիմա Հասուն գերապայծառին՝ կոտանդնու-

պօրոյ կրթովիկ ժողովրդեան հովիւին բուն հոգին : Աշխարհն-
բաւ հոգեւորապէս հիւանդանալը՝ մեռնիլը կը փնտռէ՝ որ ինքը
իր կիրքը յապէցնէ :

Բայց եթէ ժողովուրդը գլուխնին տաքցած՝ ձեռք վերցու-
ցած բլային՝ յորմէ Աստուած եւելօք վշտանար, արդեօք Հա-
սուն գերապայծառը՝ մեծն՝ Ներսէս սուրբ հայրապետնուս պէս՝
եղած մեղքին համար պիտի լա՞ր : Ա՛յո՛ մէկ ճշմարիտ հովիւի մը
գործք՝ ասանկ պէտք էր՝ որ ըլլար : Բայց Հասուն գերապայծա-
ռին ընելիքը աս չէր : Ա՛յլ բարկութեան սուրբ ձեռքը առած՝
աջ ու ահեակ չը նայելով, ընդարձակ ասպարէզ մը պիտի ունե-
նար առջին, իր հոգեւոր իշխանութեան պատիժները անձրեւի
պէս վազցունելու իրեն հակառակ կեցողներուն վրայ : Աւ ան-
կէց ետեւ ալ կարօտ չէր ըլլար՝ որ քաշելով քաշկուտելով ընթ-
րեաց կոնդակին դէմ եղաւ ըսելով, նոյն կոնդակին ՚ի Պօլիս զօ-
րելուն խելք բանեցունէ :

Բայց ինչէ՞ն է՝ որ Հասուն գերապայծառը՝ ասանկ մէկ ար-
թուն հսկողութիւն մը կը ցուցունէ պատժելու : Այլթէ մինակ
պատժելու իշխանութիւն ունի, վարձատրելու չունի՞ : Իր ժու-
ղովրդեան կամ գղերին մէջ մինչուկ աս օր՝ արդեօք վարձատրե-
լու գործք մը չը կրցա՞ւ դտնալ : Վտած իսկ ըլլայ՝ պատժելը ա-
րեւելքի մեծերուն հովուական պաշտաման լուծն է : Այլթէ
Քրիստոսի՝ առաքելոց համար խոստացածը՝ «Նստջիք յերկոտա-
սան աթոռ դատել զերկոտասան աղքան Իսրայէլի», սխալմուն-
քով մը ասոնց բռուէր, բարիները ու առաքինիները բնաւ չէին
վարձատրեր, մինակ չարերը դժոխքը խրկելու կը նայէին :

Ասանկ Քրիստոսի ոչխարներու հովիւ մը՝ եթէ իր ձեռաց
տակ գտնուող հօտը հովուելու ու ժողովելու տեղ՝ անոնց ցրու-
ուիլը ու վնասիլը ուզէ, իրեն անօրինակ գործքերով հօտին
խրտնելուն պատճառ ըլլայ, ի՞նչպէս կարող կ'ըլլայ հօտէն դուրս
գտնուած ոչխարները Քրիստոսի փարախը դարձունելու : Ի՞նչ
պէս կարող ըլլայ համարձակիլ ըսելու իր երկնաւոր հովուա-
պետին խօսքը «Նաեւ՝ այլ ևս ոչխարք են իմ, որք ոչ են յայսմ
գաւթէ, և զայն ևս պնրա է ինձ ածել այսր, և ձայնի իմում
լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ » :

Լ.Չ. Այլթէ արեւելքի ստորակարգեալ մեծերը՝ նոյն նախան-
ձստինդութիւնը ունենային հոգիներու փրկութեան՝ ինչ որ
եկեղեցւոյ գլուխը, կաթողիկէ հաւատքը արեւելքի մէջ աս

աստիճան ամբօթեան մէջ շէր մնար : Հիմակուան Սրբազան սուրբ քահանայապետը՝ եթէ Պօղոս առաքեալին ըսածին պէս՝ ինքն ալ ասոնց ըսելու ըլլայ « Նմանողք ինձ եղիջիք՝ որպէս և ես Քրիստոսի . » (Ա . Կրի . 7 . 16) ամենեւին իրեն ականձ տուող չունենար , ինչպէս իրօք ալ չունի : Ըս ըսածնիս տարակուսելու մութ խօսք մը չէ՛ , ամեն օրուան նոր նոր տեսածնիս ու ըսածնիս է : Պետրոս առաքեալին՝ « Լինել օրինակ հօտին » ըսածը՝ աս օրուան օրս արդեօք ո՞վ կը կատարէ : Ըս պակասութիւնը փոխադրական ախտի մը պէս՝ անանկ արեւելքի մեծերուն վրայ տիրած է , որ ամենը մէկէն Հասուն գերապայծառին երկուօրեակ կրնան համրուիլ , ու ամենուն գործքը մէկ ճանապարհ կուգան կ'աւարտին : Շիշմանեան Լնտոն գերապայծառը 'ի Վաղատիայ . Պաղատուր եպիսկոպոսը 'ի Պրուսայ , ու Ըռաքեւեանը 'ի Տրապիզոն . ասոնց ո՞րը իր հօտին բարի օրինակ տուած ունի : Սէկին՝ կտակին նենգը , մէկալին՝ դայթակղական կողմնասիրութենով իր քաղաքացիները՝ Պրուսայի բնիկներէ աւելի նախապատուելը ու հոգալը , միւսին՝ սրիկայից վայել , Լեփեթի՛ , Լեփեճեթի՛ , Լեփի՛ , խօսքերով անիրաւ արբացելը , արդեօք Քրիստոսի բարի անունը հայհոյել տարու պատճառ չեղան : Իւրաքանչիւրը իր աւագութեանը համաչափ բռնութիւն մը ձեռք առած՝ ժողովուրդը նեղելու ու խոշտանգելու վրայ են : Ու աւելի մեծը՝ գրեթէ աւելի բռնութիւն մը ընելու պարտական եղած կ'երեւնայ : Կիւրիկիայի Պասրիարքն ալ եպիսկոպոսութենէ վեր բարձր իշխանութեան հասած ըլլալով , նոյն օրինակ բռնութիւնն ալ մէկալնոցմէ շատ վեր կ'երեւայ :

Ըս Պատրիարքը՝ իր տիրապետող իշխանութիւնը ժողովը գեանը վրայ գործածելէն ետեւ , Լնտոնեան կրօնաւորներուն հասուցած չարիքներուն թնչ կ'ըսես : Ըսոնց Հռովմ փոխադրու վերուն նախանձը ինքը ղինքը կ'ուտէ : Սէկ գիէն Հռովմ կը բողոքէ , անոնց հետ անիրաւ դատ մը կը բանայ , մէկալ գիէն քսան երեսուն հատ Հայէսպի սինկլորո գլուխը կը ժողվէ , անոնցմէ բռնի կրօնաւորաց վանքը խօթել կուտայ : Ըս ալ չը բաւեր՝ մէկ մ'ալ անխիղճ իր ձեռագիրովը և մեծ մեօհիւրովը զանոնք Տէրութեան ալ կը մասնէ , իբր քրեական մեծ յանցանքի տէր՝ արեւելքէն արեւմուտք փախչելնին զրպարտելով : Չէր գիտեր խելացին՝ որ ան Սիւրբանութիւնը ալ՝ բարերար կայսրէն՝ Սուլթան Ըպտ-իւլ-Սէճիտէն զանազան շնորհա

բաշխութեամբ չնորհ գտած էր պատուելու : Աւտի իրաւամբ
ազգին պաշտպանութեանը հետ Տէրութեան պաշտպանութիւնն
ալ միացաւ , և արդարութիւնը զըպարտութեան յաղթեց , մե-
ծապատիւ փոխարքային ստատիկ հրամանագրովը բռնութիւնը
վանեցաւ , և իրաւունքը իր տեղը գտաւ :

Բոլորովին խելք չէ հասնելու բան , որ այսպիսի նախապա-
տիւ եկեղեցական անձինքներ՝ Սուրբ Ժողովքին ատենէն ելլան՝
աշխարհական օտար ատեան խնան . եկեղեցական կանոնները
ոտքի տակ առնեն , մեծին ու պղտիկին անիրաւութիւն ընեն ,
ու ՚ի վերայ այսր ամենայնի՝ մեծ յարգ ու հեղինակութիւն ու-
նեցած ըլլան նոյն Ժողովքին առջին : Ըստնց ամենուն աս կերպ
անկանոն ու թիւր ընթացքը (որոնց համար թերեւս խոհեմու-
թիւնով լռած ըլլայ Սուրբ Ժողովքը) , իրենց յայտնի դատաւ
պարտութիւն կրնայ համբուիլ : Քրիստոս՝ շատ առաջուցմէ
որչեց՝ որ եթէ հովիւ մը՝ իրեն ցուցուցած ճամբայէն խտու-
րելու ըլլայ , անանկ հովիւը գող և աւազակ է ու ճշմարիտ հո-
վիւ չէ՝ « Ար ոչ մտանէ ընդ դուռն ՚ի դաւիթ ոչխարաց , այլ
ընդ այլ ելանէ՝ նա՛ գող է , և աւազակ » : Հովիւ ըլլալու հա-
մար՝ Քրիստոսի սահմանած դռնէն կամ ճամբայէն պէտք է որ
երթայ . « Իսկ որ մտանէ ընդ դուռն , հովիւ է ոչխարաց »
(Յովհ . Ժ : 1) :

Լե . Եթէ ամեն բան՝ բարի ու ուղիղ ըլլալու համար՝ կա-
նոններու համեմատ պիտի ըլլայ , ու ճշմարտութեան կշիռքէն
պիտի չը խտորի , հապաւաս մեր գրուածքը ինչ սկզբունք կ'ու-
նենայ բարի ըսվելու , որ « Ժողովրդեան իշխանը չը բամբասուի »
պատուիրանին հակառակ կուգայ :

Աս բանը ինչչափ որ առջի բերան աչքի կը դարնէ ու չար կը
բռնրվի նէ , գիպուած ալ կ'ըլլայ՝ որ ոչ միայն ընողը կ'արգարաւ
ցունէ , այլ և պարտաւոր և ս կ'ընէ մարդը՝ եւս գերագոյն
օրէնքներու համեմատ գործելու :

Ըստուած ամեն բանը՝ իր մի միայն փառացը համար ստեղ-
ծեր՝ կարգեր ու սահմաններ է : Ամեն բան Ըստուծոյ փառքին
համար կ'սկսին , ու Ըստուծոյ փառքին համար կ'աւարտին : Ը-
ամեն բան Ըստուծոյ պիտի զօհվի , իբր առաջին սկիզբն ու վեր-
ջին վախճան : « Օ իշխան Ժողովրդեան քո մի բամբասեսցես »
պատուիրանը՝ ինչչափ որ Ըստուծոյ փառացը նիւթ կ'ըլլայ նէ՝
պիտի իմացվի , չէ՛ թէ՛ Ըստուծոյ հաւատքին ու սուրբ կրօնքին

անպատուութիւն բերած ժամանակ : Օ՛րաւայի մը յանցանք՝ իր տիրոջը անպատուութիւն բերելու ըլլայ, ու արդար օրինօք տէրը ազատ պահելու համար, ծառային յանցաւորութիւնը երեւան հանելու ըլլանք, արդեօք օրէնքի հակառակ գործած կ'ըլլանք : Այս օրուան իշխան ժողովրդեան կարգուած Հասուն գերապայծաւը՝ Աստուծոյ արարածը չէ՛. Աստուծոյ ծառան չէ՛ : Այս ծառան իր պաշտաման մէջ կրօնքի անպատուութիւն բերունէ, սրբ պիտի ջատագովենք, կրօնքը թէ ծառան : Անոր մինչուհ հիմայ ըրածները՝ արդեօք հաւատքնու անպատուութիւն չեղա՞ւ, կրօնքնու նախատինք չեղա՞ւ, կրօնական խնդիրները այլակրօն Տէրութեան ատեան արդէն իսկ չը հանեց . « Անուն իմ վասն ձեր հայհոյի ՚ի մէջ հեթանոսաց » Աստուծոյ գանգաւոր՝ արդեօք տիրապէս մեր ժամանակին համար ըսուած չի կարծուիր : Ասնք ասանկ գիտնալէն ետեւ, արդեօք դեռ խիղճ ընելու ենք ծառային յանցանքը նշաւակելուս համար :

Հանցաւոր մը հրապարակական գործքերով իր անունը արատէ, աշխարքիս չորս կողմը իր անունը ըսել տայ, մեծը ու պզտիկը լեզուի հանէ, արդեօք դեռ խիղճ կը մնայ անոր համբաւին մնասովելուն . մանաւանդ՝ երբ որ ուրիշին համբաւին արդար պաշտպանութիւնը մէջ մտնալու ըլլայ : Հեռաւոր քաղաքներու խմաստունները՝ եթէ բանիւ եթէ գրով Հասուն գերապայծաւին անկանոն գործոցը գատաւոր չեղա՞ն :

Կոստանդնուպօլիս՝ Իզմիր՝ Սալթա՝ Թօսքանայ՝ Հոովմ՝ Վենետիկ, Փարիզ և այլ ուրիշ շատ քաղաքներ մարդ մնաց՝ որ ըրած բաները չիմանան, չը լսեն ու չը գայթակղին : Կոստանդնուպօլիսոյ՝ Իզմիրին՝ Սալթային՝ Թօսքանային՝ Վենետիկին ու Փարիզին լրագրիւնները՝ բան թողուցին՝ որ չը գրեն և ընդամենայն աշխարհ չը հրատարակեն ամեն մէկ եղածները :

Ասոնց ամենուն պատճառը ո՞վ եղաւ, պատմութեանց մէջ արդեօք ասոր օրինակ մը ունինք . կամ թէ եղած բաներուն ճշմարտութիւնը ըսելուս համար արդեօք եպիսկոպոսաց պատուոյն հակառակօղ պիտի դատուինք : Սեփեղուն վրայօք միշտ աղէկ ըսելու համար՝ արդեօք ճշմարտութեան պիտի խոտորինք, կեղծաւորութիւն պիտի ընենք, երեսպաշտութիւն պիտի ընենք : Կամ Պօղոս առաքեալին Վաղատացիներուն ըսածին պէս՝ ճշմարտութիւնը ըսելուս համար՝ թշնամի պիտի համբուինք, ո՞ թշնամի իմն եղէ, զի զստոյգն խօսեցայ » (7 . 16) :

Եթէ անկողմնասէր Պօղոս առաքեալը՝ հիմահուան ժամանակս մեր մէջն ալ գտնուէր, ատեն մը կորնթացիներուն երեսը վար առածին պէս, արդեօք Կոստանդնուպօլսոյ Հռովմէական Հայոց երեսն ալ վար կրնար առնել աս ճանր խօսքերովը՝ «Այնչափ ոչ գոյ որ իմաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել ՚ի մէջ եղբօր իւրոյ: Այլ եղբայր ընդ եղբօր դատի, և զայն ՚ի մէջ անհաւատից ո» (Ա. Կորն. Դ. 5): Արովհետեւ ազգը իր իրաւունքը առաջուցմէ գիտէր, զանի պաշտպանել ուզէց, պատճառները երեւան հանեց, իր իրաւունքներու արդար պաշտպանութիւնը ցուցուց, ու միշտ պիտի ցուցունէ: Վայց անկաճ տուող չլլաց նէ, արդեօք Առաքեալին յանդիմանութեանը արժանաւոր ո՞վ կ'ըլլայ:

Այլ ասկէց աւելի՛ ազգը թնչ կրնար ընելու: Աս գրքիս ալ հրատարակուելուն պատճառը՝ Հասուն Կերպայածառին գործոց վրիժուցը համար չէ՛, անոր անձին ատելութիւն մը ունենալուն համար չէ՛. հասլա՛ մի միայն Հաւատքնուս ճշմարտութեանը համար, Կրօնքնուս անկեղծութեանը համար: Արպէս զի ամենայն ազգք և ազինք՝ որոնք եւեւ պակաս իրենց քմացը համեմատ խօսեցան՝ դատեցին ու գրեցին, գիտնան՝ որ աս չբութութիւններուն պատճառը՝ մեր գլուխը Հռովմայի Աթոռին կապած ըլլալուն համար չէ՛՝ պակասութիւնը Հաւատքին չէ՛, Կրօնքին չէ՛, Ազգին չէ՛, այլ մասնաւոր անձի մը. որ մեր դժբախտ ըլլալուն՝ աս օրուան օրը մեզի հոգեւոր գլուխ ալ կարգուեր է նէ, եւս մեծագոյն և նախապատիւ գլուխ՝ Հռովմայի Սրբազան Քահանայապետը ճանչնալով, կը յուսանք՝ որ անտարակոյս հոգ տանի խեղճ Կաթողիկ Հայոց եկեղեցւոյն հանդարտութեանը, ինչպէս որ մեր Տէրութիւնն ալ նոյն հանդարտութիւնը աներկբայ պիտի հաստատէ:



ՃՇՄԱՐՏԱԽՕՍ
Ն. Բ. Լ. Տ.
ՀՈՒՎԱՐՏԱԿԱՆ ՀԱՅՍՏԻ

